

→

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ←

ԸՆԿ. ՏՈՔԹ. ՄԵԼԳՈՆ
ԷՊԼԻՂԱԹԵԱՆԻ ՀԵՏ

(ՏԵՍՆԵԼ 4ՐԴ ԷԶ)

ԱԶՏԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Գ.ՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ Կ'ԸՍԵՆ.

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

ازتاک جريدۀ يومية سياسية وأدبية - الدورية السبوعية - إقطاعية

1000 Լ.Ո. 71ԳԴ ՏԱՐԻ, ԹԻԻԻ 110 (19410) ՀԻՆԿԱԿԱԿՈՒԹ, 18 ՅՈՒՆԻՍ 1996 10 ԷԶ

Des Prix Frais pour un Été Chaud

tapiérama

Le monde du tapis

60%

•Rabais jusqu'à 60%
•Paiement échelonné sur 10 mois
•Sans intérêts, sans 1^{er} versement

Tapis: Persan-Chinois-Européens-Moquettes-Papiers peints

ԱՍՍՏ - ՀԵՐԱՌՈՒԻ ԳԵՐԱՍՏԻՈՒՆԻՆ

ԱՐԴԱՐ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ
ԵՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ՀԱՐՑԵՐԸ

Իսրայելեան քաղաքականութեան մէջ արձա-
նագրուած փոփոխութիւնը եւ Միջին Արեւելքի մէջ
արդար խաղաղութիւն հաստատելու կամքը երեկ
եղան խորհրդակցութեան գլխաւոր նիւթերը Սու-
րիա - Լիբանան ալի գերաւորութեան, որ տեղի ու-
նեցաւ Դամասկոսի մէջ, նախագահներ Իլիաւ Հը-
րաուիի եւ Հաֆէզ Ասատի միջեւ:

Երկու նախագահները նախ 5 ժամ տեւողու-
թեամբ գլուխ գլխի հանդիպում մը ունեցան. ապա
անոնց միացան փոխ նախագահ Ապտէլ Հալիմ Խա-
տամ, վարչապետ Մամուտ Ջոնպի, արտաքին գոր-
ծոց նախարար Ֆարուք Շարէի եւ սոյալակոյտի
պետ Հիլմաթ Շեհապի:

Գերաստիւնը ընկալեց իսրայելեան ետդար-
ձի քաղաքականութեան դէմ Գահիթէի գերաստի-
նանի յարտաշարուած արաբական կամքը կենսա-
գործելու եւ խաղաղութիւնը միջազգային օրէնքի
եւ խաղաղութեան խորհրդաժողովի սկզբունքնե-
րուն վրայ կենսագործելու ընտրանքը:

Պէշուրթեան դէտերու նկատողութեան չվրի-
պեցաւ, որ Հըրաուիի Դամասկոս ալցելութիւնը կը
զուգահիւյսի միջին արեւելեան բեմին վրայ լայնա-
ծիր եւ աշխոյժ եռուգեղի մը, որ ծալք տուաւ Իսրա-
յէլի վարչապետին Ուաշինկթըն ալցելութեան ետք:
Գահիթէ Երեքշաբթի օր ժամադրաւար էր Եգիպ-
տոս - Սուրիա - Յորդանան հանդիպումներու, որոնց
յաջորդեցին Իսրայէլ - Յորդանան եւ Իսրայէլ -
պաղեստինցիներ հանդիպումները:

Պէշուրթեան աղբիւրներ ըսին, որ Դամասկոսի
գերաստիւնը ընդգրկած է նաեւ Հարաւի զինա-
դուլի լանձնախումբի կազմութեան եւ Լիբանանի
երեսփոխանական յաւաքի վրայ ընտրութեանց կապ-
ւած հարցեր: Մամուտ է, որ Լիբանան արդէն կլա-
ւած է դէպի 18 Օգոստոս եւ անոր յաջորդող շաբա-
թավերջերու հանգրուանները տանող հոսանքին մէջ:

ՆԵՍԻՊ ԼԱՀՈՒՏ ԱՅՅԵԼԵՅ
Հ.Յ.Դ. ԼԻԲԱՆԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ



Լահուտի հետ տեսակցութեան պահուն

Երեսփոխան Նեսիպ Լահուտ երէկ երեկոյ այցելու-
թիւն մը տուաւ Հ.Յ.Դ. Սարդարապատ ակումբ եւ ըն-
դունուեցաւ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդր. Կոմիտէի ներկա-
յացուցիչներուն եւ նախարար մեթր Շահ Հաբուսեան-
նի կողմէ: Մասնօթէ, որ Լահուտ կրծարգրէ յառաջիկայ
ընտրութիւններուն թեկնածու ներկայանալ Մեթնի շրո-
ջանէն եւ չփոժմեր կ'ունենայ, գլխաւորելու համար
ընտրական ցանկ մը:

Հանդիպումը առիթ մը եղաւ խորհրդակցելու Լիբա-
նանը յուզող հարցերուն մասին: Շեշուեցաւ ընտրու-
թիւններուն մասնակցութեան կարեւորութիւնը եւ ընտ-
րութիւններուն կապուած հաւանականութիւնները:

Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչ-
ները ընդունեցին այցելութիւնը նաեւ ժողով Ապու Շա-
րաֆի (որ որդին է Լուիս Ապու Շարաֆի) եւ թեկնածու
պիտի ներկայանայ Քեքուեանէն:

ԻՐԱՆԻ ԻԵՍՊԼԱՆԻՆ ՄՕՏ

Միւս կողմէ, Հ.Յ.Դ. Լիբանանի Կ. Կոմիտէն ներկա-
յացնող պատուիրակութիւն մը երէկ այցելութիւն մը
տուաւ Լիբանանի դեսպանատունը եւ մօտաւորապէս 1-5
ժամ տեւողութեամբ հանդիպում մը ունեցաւ դեսպան
Հումայուն Ալի Ջատիի հետ:

Խորհրդակցութիւնները ընդգրկեցին Լիբանանի եւ
Իրանի հայ համայնքները յուզող հարցեր, ինչպէս նաեւ
Լիբանան-Իրան յարաբերութիւններն ու գործակցու-
թեան դաշտերը:

SOLDES

DROP 8

ZALKA - CITE MOUSA

50% 70%

ՄՈՒՊԱՐԱԸ ՊԻՏԻ ՅԱԶՈՂԻ
ՃՆՇԵԼ ՆԵԹԱՆԻԱՇՈՒԻ
ԿՐԱՅ

ԵՐՈՒՍԱՂԷՄ, 17 (ՌԷՕ-
ԹԸՐ) - Իսրայէլի վարչա-
պետ Պենիաթին Նեթանիա-
հու ճնշումի կ'ենթարկուի
արար դրացիներուն կող-
մէ՝ Միջին Արեւելքի խա-
ղաղութեան գործընթացին
համար: Նեթանիահու գալ-
րացուցած է արարները՝
մերժելով հողի փոխարէն
խաղաղութիւն սկզբունքը,
ինչպէս նաեւ առկաի պա-
հելով պաղեստինցիներուն
հետ սկսուած բանակցու-
թիւնները ինքնավարու-
թեան վերջին հանգրուանի
մանրամասնութիւններուն
մասին:

Այս պայմաններուն եւ
ճնշումին տակ, Նեթանիա-
հու Հինգշաբթի օր (այսօր)
Եգիպտոս կ'ուղղուի, տե-
սակցութիւն ունենալու
համար նախագահ Հիւսնի
Մուպարաֆի հետ: Նեթա-
նիահուի բանբեր Մալքը
Սթոյց ըսաւ, որ ծանօթա-
ցումի հանդիպում մը պի-
տի ըլլայ երկու դեկտեմբ-
րներուն միջեւ: Նեթանիա-
հու պիտի փորձէ Մուպա-
րաֆը համոզել, որ ճակա-
տուածի քաղաքականու-
թիւն մը յառաջխաղացքի
մէջ պիտի չգնէ Միջին Արե-
ւելքի խաղաղութեան գոր-
ծընթացը: Սթոյց աւելցուց,
որ Իսրայէլ վերստին պի-
տի հաստատէ, թէ ինք
պատրաստ է գործադրու-

թեան դնելու Օսլոյի հա-
մաձայնագիրները, պալ-
մանաւ, որ ահաբեկչու-
թիւնը չըլլայ անոր գոր-
ծադրութեան ընկերակիցը:
Պաղեստինցիները,
որ Մուպարաֆի հետ հան-
դիպումը մեղմացնէ Նե-
թանիահուի կեցուածքը,
որ անգիջող մնացած էր
Ուաշինկթընի անցեալ
շաբթուան այցելութեան
ընթացքին: Պաղեստինցի
պաշտօնատար մը ըսաւ, որ
պաղեստինցիները տակա-
ւին կը սպասեն Իսրայէլի
խոստումները, որոնց հա-
մաձայն Նեթանիահու պի-
տի վերսկսէր բանակցու-
թիւններուն՝ իր կառավա-
րութիւնը կազմելէ ետք:

Նեթանիահուի Եգիպ-
տոս այցելութիւնը նախա-
պատրաստելու համար,
Չորեքշաբթի օր Գահիթէ
ուղղուեցաւ անոր քաղա-
քական խորհրդատուն՝ Տո-
րէ Կոյտ, որ տեսակցու-
թիւն պիտի ունենայ Եգիպ-
տացի իր պաշտօնակից Ու-
սամա Պալի հետ:

ՅԱՒԱԿՅԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ

Ազնուափալ տիկին Լուիզ Մանուկեան - Սիմոն
Նախագահունի Հայ Բարեգործական Ընդհանուր
Միութեան

Լիբանանի Հայոց Ազգային Իշխանութիւնը խոր
ցաւով իմացաւ Ձեր հօր եւ Հ.Բ.Ը.Մ.ի ցկեանս նա-
խագահ եւ ազգային բարերար Ալեք Մանուկեանի
մահուան գոյժը:

Ալեք Մանուկեան հայոց 20րդ դարու պատմու-
թեան մէջ եղաւ ազգային անգուգական բարերա-
րը, որ իր արդար վաստակէն օրհնութեան պէս բաշ-
խեց Հայրենիքին մէջ եւ Սփիւռքի տարածքին, Հայ
Ժողովուրդի բարօրութեան եւ Հայց. Եկեղեցւոյ
պայծառութեան համար:

Ալեք Մանուկեան իր քիթի տասարդ տարիքին եղաւ
առաջնորդող դէմք եւ գործ, իր յառաջացած տարի-
քին՝ առիթնուղ ու ներշնչող տիպար եւ իր անմո-
ռանալի յիշատակովը պիտի մնայ անժամանցելի
անուն եւ օրինակ:

Ազգային Առաջնորդարանը, Կրօնական դասու
եւ Քաղաքական Ժողովի ու անոր խորհուրդներու
անունով, Պատգազ ցաւակցութիւններով կը բաժ-
նէ Ձեր եւ Հայ Ժողովուրդի հարազատին՝ Ալեք
Մանուկեանի կորուստի կսկիծը, մաղթելով որ Բա-
րերար Աստուած իր երկնային երանութեան մէջ
հանգչեցնէ երախտաշտ բարերարի հոգին եւ իր
հարազատներուն պարգեւ Ս. Հոգւոյ միութարու-
թիւնը, եւ իր բազմամեայ տարիներու ազգանուէր
գործունէութիւնը խթան եւ անշեղ ուղղութիւն ըլ-
լալ գալիք սերունդներուն:

ԳԵՂԱՄՎՐԻ. ԽԱՉԵՐԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՆ
ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ

ԸՆՏՐԵՑԷՐ ԵՒ ԲՆԱԿԵՑԷՐ
ԱՆՄԻՋԱՊԷՍ

ԼԻՈՎԻՆ ՀԱՆԳՍԱՒԷՏ
ՅԱՐԿԱԲԱԺԻՆՆԵՐ

Տարած. 320, 200, 155, 125 քառ. մետր
ԱՆԹԻԼԻԱՍ / ՄԸԶԸԷՐ կամ ՏԸՊՊԱՅԱ / ԱՌԻԷԱՐ

ՎՃԱՐՄԱՆ ՅԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ
50 առ հարիւրը վճարելի 2 տարիէն,
մնացեալը՝ 10 տարիէն

IGETRA (ANTRANIG BEUYUKIAN & CO.),
Սանթըր Սեպաքօ, պլոք B, Տորա, 2րդ յարկ, հեռ. 884219/29

Հ.Յ.Դ. ՀԱՅԱՍՏԱՆԻ Գ.ՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ Կ'ԸՍԵՆ.

ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԲՈԼՈՐԻՆ ՀԵՏ,
ԱՌԱՆՅ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԷ ԶԻԶՈՒՄԻ

Հ.Յ.Դ. Հայաստանի Գե-
րագոյն Մարմինը պիտի
աշխատի վերջնէլ իր օրի-
նական գործունէութեան
դէմ դրուած արգելքները,
պատրաստ է ըլլալ Նեթ-
անի հետ խաղաղութեան
կարգի վրայ, սակայն քաղաքա-
կան եւ պաղապարական
գետիններու վրայ գիշում
պիտի չկատարէ, յայտա-
րարեցին Հ.Յ.Դ. Հայաս-
տանի ընտրութիւններու
Մարմինի անդամները՝ ըն-
կերներ Ռուբէն Յակոբեան
եւ Հրայր Կարապետեան,
երկէ, Երեւանի մէջ մամ-
լոյ ասուլիսի մը պահուն:

Հ.Յ.Դ. Հայաստանի Գե-
րագոյն Ժողովի աւարտէն
ետք, առաջին այս մամլոյ
ասուլիսը տեղի ունեցաւ
Երեւանի խորհրդարանի
Տան դահլիճին մէջ: Ներ-
կայ էին շուրջ 3 տասնեակ
լրագրողներ: Գերագոյն
Մարմինի ներկայացուցիչ-
ները խոսեցան Գերագոյն
Ժողովին, անոր արդիւն-
քին եւ Հ.Յ.Դ. յառաջիկայ

գործունէութեան ծրա-
դիրներուն մասին: Անոնք
առաջին հերթին անդրա-
դարձան ժողովէն ըխած
յայտարարութեան, նկա-
տել տալով, որ հայաստան-
եան մամուլը ոչ-ճարտա-
կան կերպով արձագան-
գած էր անոր: Ապա,
անոնք խօսեցան ժողովի
օրակարգին եւ դիմակա-
լած հարցերուն մասին, յի-
շեցնելով, որ ծանօթ պալ-
մաններուն եւ 28 Դեկտեմ-
բեր 1996ին դրուած արգել-
քին հետեւանքով, Հ.Յ.Դ.
Հայաստանեան կազմաւոյ
տարողութեամբ ամբող-
ջական ժողով չէր կրցած
գումարել:

Խօսելով յառաջիկայ
քայլերուն մասին, ներկա-
յացուցիչ ընկերները ըսին,
որ Հ.Յ.Դ. թեկնածու պի-
տի չներկայացնէ նախա-
գահական յառաջիկայ
ընտրութիւններուն, որով-
հետեւ իր ներկայացուցիչ-
ընկ. Վահան Յովհան-
նիսեան կը մնայ բանալ
տարուած է հետեւեալ ձե-
ւով: Յովիկ Աղազարեան՝
նախագահ, Վարդան Պետ-
րոսեան՝ քարտուղար, Գա-
րիկ Սկրտչեան՝ գանձա-
պահ, Հրայր Կարապետ-
եան՝ կազմակերպական
պատասխանատու, Արտա-
շէս Շահապետեան՝ քարոզ-
չական եւ գաղափարական
հարցերու պատասխանա-
տու: (Ասուլիսի մանրա-
մասն թղթակցութիւնը կու
տանք հետագային):

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՆ ՀԱՅՐ
ՍՈՒՐԲԸ ԱՅՅԵԼԵՑ ՅՈՎՀԱՆՆԷՍ
ՊԵՏՐՈՍ ԳԱՊԱՐԵԱՆ ՊԱՏՐԱՐԷԻՆ

Լիբանանի Հայոց Առաջնորդական Տեղապահ
Գերայ. Տ. Տեղամ վրդ. Խաչերեան Ուրբաթ, 5 Յու-
լիս 1996ին այցելութիւն մը տուաւ Հայ Կաթողիկէ
Պատրիարք Յովհաննէս Պետրոս ԺԸ. Գասպարեան
նիւ. Եշրեֆիէի պատրիարքարանին մէջ: Տեղապահ
Հայ Սուրբին կ'ընկերանային Ազգ. Քաղաքական
Ժողովի անդամներ տոքթ. Կարպիս Հարպոյեան,
տիկին Տիգրի Թորիկեան, ինչպէս նաեւ Յարութիւն
քին. Կոստանեան եւ առաջնորդարանի ղեկաւա-
պետ Ժան Սալմանեան:


Պաշտօնական այս առաջին հանդիպումին ըն-
թացքին, Հայր Սուրբը շնորհակալութիւն յայտնեց
Գերբրջեանի Հօր, որ Տեղապահ ընտրութեան առի-
թով, Գերապաշտօն Վարդան Յոյս. Աշգարեանի
համբով իր շնորհաւորութիւնները փոխանցած էր:
Հարագատ ու մտերմիկ խօսակցութեանց ընթաց-
քին արժարժուեցան լիբանանահայութիւնը հե-
տաքրքրող եւ մտահոգող հարցեր, երեւոյթներ, դա-
նոնք միասնականաբար եւ ներդաշնակ աշակցութեամբ
զիմագրուելու անհրաժեշտութիւնը մատնանշուե-
ցաւ:

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՆ
ԱՅՅԵԼԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԴԵՍՊԱՆ ՊՐՆ. ՄԵԼԸՈՆԵԱՆԻՆ

Լիբանանի Հայոց Առաջնորդական Տեղապահ
Գերայ. Տ. Տեղապահ, Չորեքշաբթի, 10 Յուլիս
1996ին կէսօրէ ետք ժամը 5ին, պաշտօնական այցելու-
թիւն մը տուաւ Լիբանանի մօտ Հայաստանի
դեսպան պրն. Երուանդ Միքելեանին, դեսպանա-
տան մէջ: Հայր Սուրբին կ'ընկերանային Ազգ. Քա-
ղաքական Ժողովի անդամներ տոքթ. Կարպիս Հար-
պոյեան, տիկին Տիգրի Թորիկեան եւ առաջնորդա-
րանի ղեկաւապետ Ժան Սալմանեան:

Այցելութեան ընթացքին, Տեղապահ Հայր Սուր-
բը շնորհաւորեց պրն. Միքելեանի հաւատարմա-
տարէն դեսպանի պաշտօնի բարձրացումը եւ դիւա-
նագիտական ասպարէզի մէջ յաջողութիւն մաղ-
թեց իրեն, Հայաստանին, անոր քաղաքական ու
զարգացման, ի մասնաւորի Լիբանանի մէջ:

Շուրջ ժամ մը տեւած տեսակցութեան խօսակ-
ցութիւնները գլխաւորաբար կեդրոնացան Հայաս-
տանի մէջ կատարուող աշխատանքներու եւ ծրա-
դիրներու վրայ:



ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՔՈՒԷՆԵՐԸ ԲԱԺԱՆՈՒԱԾ

Ստորեւ տրուած յօդուածը պերճախօս օրինակ մըն է Հայ համայնքին դեմ ապատեղեկատուութեան արշաւին, որուն պատասխանը վաղը պիտի տայ ինք Հայ քուէարկողը...

Երեսփոխանական ընտրութիւնները Հայկական միասնականութեամբ եւ Հայկական բոլոր կուսակցութիւններու ու հասանքներու զօրակցութիւնը վայելող թեկնածուներով մղելու համախոհութիւնը, ինչպէս որ էր պարագան անցեալին, ըստ երեւոյթին բացակայ է այս ընտրութիւններուն, Հայկական գլխաւոր կուսակցութիւններուն միջեւ տարակարծութիւններու եւ այս տարակարծութիւնները ընտրութիւններու նախօրեակին չկարենայ լուծելու պատճառով:

Այս պատկերին դիմաց, յստակ ուղղութիւն կայ Հայ թեկնածուները տարբեր ուղղութիւններով եւ տարբեր ցանկերու մէջ բաժնելու: Ասիկա կը նշանակէ Հայ քուէարկողներու ձայներու բաշխումը ցանկերու միջեւ, յատկապէս Պէյրութի մէջ: Մինչդեռ այս ձայները միասնուած կը բռնկարկէին այն ցանկին, որ կ'ընդգրկէր Հայ թեկնածուները, ինչ որ յաւելարժէք ձայներ կ'ապահովէր, տարբերելով միւս ցանկերէն:

ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ

Հայկական ծանօթ աղբիւր մը հաւանական կը նկատէ, որ Հայերու միջեւ պառակտումը ազդէ Հայկական քուէի ուժին վրայ եւ պատճառ դառնայ անոր տկարացումը, եթէ կատարուած հաղորդակցութիւնները չյաջողին այս տարակարծութիւնները շրջանցել եւ Հայկական համախոհութիւնը գոյացնել թեկնածուներու շուրջ, ինչպէս կը պատահէր անցեալին: Հայկական գլխաւոր երեք կուսակցութիւններու՝ Դաշնակցութեան, Հինչակեաններու եւ Ռամկավարներու վերջին ժողովը չէ յաջողած տարակարծութիւնները լուծել եւ միացեալ համաձայնութիւն մը գոյացնել երեսփոխանական ընտրութիւններու գծով: Ընդունելի համաձայնութիւն գոյացնելու փորձերը տակաւին ի գործ եւ մինչեւ երեսփոխանական ընտրութիւններու վերջին քառորդ ժամը:

Աղբիւրը կը յայտնէ, թէ Հայկական կուսակցութիւններու միջեւ տարակարծութիւնը ծայր տուած է վեց ամիսէ ի վեր, ինչ որ պառակտում յառաջացուցած է Հայկական պլոքին մէջ, որմէ հեռացած են երեսփոխաններ Սուրէն խանամիրեան եւ Եղիա Ճէրէճեան: Ոմանք տարակարծութեան գլխաւոր պատճառները կը վերագրեն Հայաստանի հանրապետութեան նկատմամբ աւերուած որոշումին, ուր Դաշնակցութիւնը ընդդիմացած է Հայաստանի կառավարութեան հաւանաբարութեան (ըստ աղբիւրին), մինչդեռ Ռամկավար ու Հինչակեան կուսակցութիւնները չեն քաջալերեր ընդդիմութիւնը եւ զօրավիգ կը կանգնեն այն հանրապետութեան կառավարութեան հետ լաւ յարաբերութիւններ մշակելու:

Աղբիւրը դիտելով տայ, որ Պէյրութի ընտրութիւններու հայթիւնածուները հետեւեալներն են.

- Սուրէն խանամիրեան - Ան ընտրապայքար պիտի մղէ իր նախարար եւ կը փորձէ հակադաշնակցական Հայ կողմնու գորակցութիւնը ապահովել, ինչպէս նաեւ մայրաքաղաքի գլխաւոր ցանկերին մէկուն մէջ տեղ ապահովել:
- Խաչիկ Պապիկեան - Դաշնակցական թեկնածու:
- Եղիա Ճէրէճեան - Հինչակեան կուսակցութիւն:
- Յակոբ Զուխատրեան - Դաշնակցական թեկնածու:
- Անթուան Շատկը - Փաղանգաւոր կուսակցութիւն:
- Յակոբ Տէմիրճեան - Տակաւին չէ որոշած ընտրութիւններուն մասնակցի:
- Քարիմ Բազրատունի - Փաղանգաւոր կուսակցութիւն:

ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԸ

Հակամարտութիւն գոյութիւն ունի մէկ կողմէ Հայ բողոքականներու եւ միւս կողմէ արար բողոքականներու միջեւ, այս շրջանի բողոքական աթոռի ներկայացուցիչին չուրջ:

Հաւանական է, որ մէկէ աւելի թեկնածուներ ճշդըւին այս աթոռին համար, որովհետեւ արար բողոքականները Հայեր կ'ամբաստանեն, թէ անոնք նախկին ընտրութիւններուն իրազեկ են համաձայնութիւնը, երբ Հայ թեկնածու մը նշանակած են, մինչդեռ կարգը արար թեկնածուին էր:

Իսկ Հայ քուէարկողներուն թիւը, ըստ պետական ցանկերուն, երեսուն հազարէն աւելի է, սակայն անոնց մեծամասնութիւնը կը գտնուի Լիբանանէն դուրս: Ներկայ թիւը կը մնայ չուրջ 15 հազար ձայն, որոնք բաժնուած են հետեւեալ ձևով.

- Հինգ հազար ձայն - Դաշնակցութեան:
- Հինգ հազար ձայն - Հինչակեան եւ Ռամկավար կուսակցութեան:
- 2 հազար ձայն - Բարեգործական:
- Երեք հազար ձայն կը բաժնուին տարբեր կուսակցութիւններու եւ հասանքներու միջեւ:

ԱՌԱՆՁԻՆ ԽՈՐԴԻՄԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Աղբիւրը կը յայտնէ, որ երեք կուսակցութիւններէն իրաքանչիւրին ներկայացուցիչները բազմաթիւ հանդիպումներ կատարած են մայրաքաղաքի ցանկերու դեկավարներու հետ: Անոնք տեսակցած են Սեյիմ Հըսի, Թամամ Սալամի, «Հրապարակ»ի եւ այլոց հետ, որպէսզի յստականայ ընտրութիւններու համախոհութեան տարագրը: Հայկական կուսակցութիւնները բազմաթիւ խորհրդակցութիւններ կը կատարէ Պէյրութի բարեգործականներու հետ զաշնակցելու (որ կը ղեկավարուի նախարար Յակոբ Տէմիրճեանի եղբոր՝ Սարգիսի կողմէ) եւ անոնց ձայները (որոնք կը հասնին երկու հազարի) չահելու համար: Նոյնպէս հաղորդակցութիւններ կը կատարուին փաղանգաւոր կուսակցութեան հետ, նոյն նպատակով:

Ըստ երեւոյթին, զաշնակցներու տարագր տակաւին չէ յստակացած եւ կը սպասուի, կուսակցութիւններու եւ ընտրութիւններուն մասնակցող կողմերու կեցւածքներու արտայայտութեան:

Մանօթ է, որ Հայկական համախոհական թեկնածուները 1992ի ընտրութիւններուն մասնակցած են Ռաշիտ Սուլէի եւ Սեյիմ Հըսի ցանկերու վրայ, թէեւ առանց յայտարարելու, իսկ անոնք գործնապէս իրենց ձայները տուած են Սեյիմ Հըսի ցանկին (ըստ աղբիւրին):

ՄԱՍՐՈՒԹԻՆ ՏԱՂՈՒԹԻՆ
(«ԼԻՈՒԼ» էՆ)

ԴԱՍՏԱԿՈՍԻ ՄԷՁ

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵՆ ՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՆՆԵՐԸ՝ ԱՍԱՏ - ԸՐԱՌԻ ԳԵՐԱՍՏԻՃԱՆԻՆ

Դաժասկոսի մէջ երկէ տեղի ունեցաւ իրանեւստրիական գերաստիճան մը, որ շրջանային քաղաքական կացութեան կողքին, կեդրոնացաւ նաեւ Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններուն հետ կապուած հարցերու վրայ:

Նախագահ Իլիաս Հըրաուլի սուրիական մայրաքաղաք ժամանեց առաւօտուն եւ անմիջապէս ընդունուեցաւ նախագահ Ասատի կողմէ: Լիբանանեան աղբիւրները յայտնեցին, որ գերաստիճանին ընթացքին քրեանարկման առարկայ դարձած են Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացի հեռանկարները եւ Ապրիլեան գինաղուլի հսկիչ յանձնարումներն վերաբերեալ հարցեր:

Յիշեցնենք, որ Հըրաուլի եւ Ասատ վերջին անգամ տեսակցութիւն ունեցած էին Յունիս 12ին, Գահրիէի գերաստիճանէն 10 օր առաջ: Այսօրուրէն սկսեալ եւ մինչեւ չարաթափերը, Հըրաուլի պիտի լացա-

կայի Պապատայի պալատին, տրուած ըլլալով, որ Պեքաշի մէջ պիտի հովանաւորէ տնտեսական - առողջապահական կառույցներու բացումին, իսկ Մար Իլիասի տունը պիտի նշէ Ջահիլի մէջ:

ԱՊՏԵԼ ՄԵԿԻՏ ՊԵՅՐՈՒԹ ԿՈՒ ԳԱՅ

Արարական Լիկայի բանբերը յայտարարեց, որ Լիկայի ընդհանուր քարտուղար Իսմայիլ Ապտէլ Մեկիտ Յունիս 25ին պիտի այցելէ Պէյրութ եւ տեսակցութիւն պիտի ունենայ Լիբանանի պետական դեկավարներուն հետ: Եւսօրեայ այցելութեան ընթացքին, Ապտէլ Մեկիտ խորհրդակցութիւններ պիտի ունենայ Գահրիէի ղեկավարներուն հետ: Ապտէլ Մեկիտ Պէյրութ պիտի շուրջ: Ապտէլ Մեկիտ Պէյրութ պիտի ժամանէ Փարիզէն ու ապա պիտի ուղղուի Դաժասկոս՝ դարձեալ եւսօրեայ այցելութեան մը համար:

ՊՈՒԷՅՁ ԵՒ ՇԼԱՅԲՐ ԲՆԱՐԿԵՅԻՆ ԶԻՆԱԴՈՒԼ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ՀԱՐՅԵՐԸ

Պէյրութի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատան գործադիր Ռոն Շլայբըրը երկէ այցելեց Պուէյթի պալատ եւ Ապրիլեան գինաղուլի հսկիչ յանձնարումներ կազմութեան շուրջ խորհրդակցեցաւ արտաքին գործոց նախարար Ֆարիս Պուէյթի հետ:

Շլայբըրը յայտարարեց, որ թեքնիք կարգ մը հարցերու լուծումէն ետք, Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութիւնը հաղորդագրութիւն մը պիտի հրապարակէ յանձնարումներ կազմին մասին:

Շլայբըրը անդրադարձաւ նաեւ ամերիկեան կառավարութեան երկու օր առաջ կատարած ելու յիշեցումին, թէ ամերիկացիները պէտք է գգուշանան Լիբանանի այցելութեան վտանգներէն: Ան «իստեք» տուաւ, որ այս յայտարարութեան իմաստը ոչ թէ Լիբանան այցելութեան դէմ հաստատուած արգել-

քին երկարաձգումն է, այլ վարչական պարզ յիշեցում մը: Ան հաղորդեց, որ Ուոշինգթոնի Բրիսթաֆֆըր անձամբ կը հետաքրքրուի այս հարցով եւ արգելքի վերացման կամ երկարաձգման որոշումը պիտի տրուի յառաջիկայ ամիս:

Միւս կողմէ, Շլայբըրը գոհունակութիւն արտա-

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՍԿԱՄ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ Ի ԽՆԳԻՐ ԺՈՂՈՎՐԳԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ

Ներքին գործոց նախարարութիւնը երկէ ստացաւ երեսփոխանական թեկնածուներու առաջին յայտարարագրութիւնները, վինչ այլ ուղղութեան վրայ՝ չփոխեցրը կը շարունակուին զաշնակցներու ընտրական կազմութեան գծով: Այս ծիրին մէջ, նախկին նախարար Պուէթիւս Հարպ յայտարարեց, որ իշխանութեան ընդդիմադիր շրջանակները լծուած են ընտրական ցանկերու պատաստութեան, յոյժ ընտրաշրջաններուն մէջ պայքարելու համար իշխանութեան մօտիկ ցանկերուն դէմ:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ՍՐԱԿԳՐՈՒՄԻ
ԼԱԻԱԳՈՅՆ ԶԵԻ

Նախկին երեսփոխան Փիեռ Տաքթաշ յայտարարեց, որ ընտրական օրէնքի սխալներուն հակադարձելու յաւաքոյն ձեւը ընտրութիւններուն մասնակցին է, իրրեւ յաւաքոյն արտայայտութիւն՝ ժողովրդավարութեան եւ պաշտութիւններու համար պայքարի:

Անդրադառնալով «ներքին ընդդիմութեան» կողմէ 2 օր առաջ հրապարակուած ծանօթ յայտարարութեան, Տաքթաշ ըսաւ, որ ներքին ընդդիմութիւնը ըստ հուսման չի տարբերի արտաքին ընդդիմութեանէն, այլ տարբերութիւնը միայն գործելու եղանակն է մէջէ: Տաքթաշ վստահացուց, որ ընդդիմադիրներու շարքերուն մէջ լուրջ տարակարծութիւններ չկան:

ՏԱԿԱԻԻՆ «ՊՅՅԳՐՈՒ»

Փաղանգաւոր կուսակցութեան մէջ ընդդիմադիր թեւի պատասխանատուներէն Միշէլ Ժապպուր երկէ կողմ ուղղեց իրանապցիներուն, պոքթիւն եմթարկելու երեսփոխանական ընտրութիւնները, որովհետեւ ըստ Ժապպուրի, ընտրական օրէնքը կազմուած է անձնական, եւ ոչ թէ ընդհանրական սկզբունքներու հիման վրայ:

Ընդդիմադիր շրջանակի էշրեֆիէի պատասխանատու ըսաւ, որ մարտին եպիսկոպոսներու ծանօթ յայտարարութիւնը յաւաքոյն ձեւով կ'արտայայտէ իրանանեան իրականութիւնը, «որ կը յատկանշուի անարդարութեամբ, խտրականութեամբ եւ անձնական փառսիրութիւններով»:

400 ՀԱՋԱՐ ՏՈԼԱՐԻ ՕԺԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Առողջապահութեան նախարար Մարուան Համադէ երկէ ստանձնեց 400 հազար տոլար արժողութեամբ դեղերու օգնութիւն, որ տրամադրուած է «Ուըրլու Վիժըն» կազմակերպութեան կողմէ: Ստանձնումը արարողութիւնը տեղի ունեցաւ Քարանթինայի դեղորայքի կեդրոնական պահեստին մէջ:

Համադէ հաղորդեց, որ բարեսիրական այս կազմակերպութիւնը նման օգնութիւն ցոյց տուած է նաեւ գինուորական հիւանդանոցին: «Ուըրլու Վիժըն» մեծապէս օգտակար եղած է նաեւ 400 գաղթականներու, որպէսզի անոնք կարենան վերադառնալ իրենց նախնի ընկալալիքը: Լեռնայիրանանի գանազան գիւղերուն մէջ:

ԼԻԲԱՆԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԱՃՈՒՄՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Լիբանանի մէջ ՄԱԿԻ ներկայացուցիչ Ռոս Մաունթիթի եւ ելեմտական հարցերու պետական նախարար Յուաթ Սինիորա երկէ հրապարակեցին մարդկութեան զարգացման վերաբերեալ ՄԱԿԻ տեղեկագիրը, մամուլը սենտիքայի կեդրոնին մէջ տեղի ունեցած հաւաքի մը ընթացքին:

Մաունթիթը հաղորդեց, որ զարգացող 15 երկիրներ վերջին տարիներուն արձանագրած են տնտեսական մեծ յաջողութիւններ, մինչդեռ 8ը՝ այլ երկիրներու տնտեսութիւնը այժմ կը գտնուի իր ամենավատ վիճակին մէջ՝ վերջին 10 տարիներուն բաղադրած:

Նախարար Սինիորա անդրադարձաւ Լիբանանի կազմութեան: Ան ըսաւ, որ կառավարութեան հիմնական նպատակն է Լիբանանը վերադարձնել նախապատերազմեան բարոյութեան եւ վերահաստատել անոր տնտեսական դերակատարութիւնը՝ Միջին Արեւելքի մէջ: Սինիորա դիտել տուաւ, որ այս ուղղութեամբ արձանագրուած են չօշափելի բազմաթիւ յաջողութիւններ: Օրինակի համար, ըսաւ նախարար, կառավարութիւնը վերջին 3 տարիներուն յաջողած է գործ ապահովել մօտ 120 հազար հոգիի:

Վերաշինութեան եւ բարգաւաճման խորհուրդի փոխ նախագահ Պուէթիւս Լապաքի հաղորդեց, որ 1994 եւ 1995 տարիներուն Լիբանանի տնտեսական աճը նահանջ արձանագրած է: Ան ըսաւ, որ պատճառը պետական պարտքերու կուտակումն է:

•ԱՇԽԱՏԱՆՔԻ նախագահ Ասատ Հըրտան թելադրեց նախարարութեան համապատասխան ծառայութիւններուն, որպէսզի քննութիւն բանան այն բողոքներուն շուրջ, ըստ որոնց, իրանանեան հաստատութիւններ վերջերս գործէ արձակած են բազմաթիւ իրանանցիներ, անոնց փոխարին գործի ընդունելով աշխատանքի արտօնագիր չունեցող օտարականներ: Հըրտան չեղտեց, որ իշխանութիւնները յանձնառու կը մնան իրանանեան աշխատող ձեռքը պաշտպանելու՝ ընդդէմ օտար աշխատաւորներու ապօրինի կեցութեան:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ցկեանց Պատուակալ Նախագահ եւ Ազգային Բարերար

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

յիշատակիմ, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի յառաջիկայ Կիրակի, 21 Յունիս 1996, Ամբիլիաի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

Պաշտօնական ցաւակցութիւնները կ'ընդունուին տեղւոյն վրայ:

Հ. Բ. Ը.Մ. ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐԶԱՆԱԿԱՅԻՆ

ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հ.Ե.ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԱՅԺՄ MASTER MALL-Ի ՄԷՁ

Երբ յաջորդ անգամ այցելեք MASTER MALL, կանգ առեք ԳՐԱՏՈՒՆ ԱՆԹՈՒԼԻ մօտ, որ նոր մասնաճիւղ մը բացած է: Հնո պիտի գտնէք գիրքերու եւ թերթերու ամէնէն ճոխ հաւաքածոն:

Երբ յաջորդ անգամ այցելեք MASTER MALL-ի մէջ ձեր շրջապատյոսին ընթացքից BIG CAFE-ի մէջ համեմատեցէ ամէնէն համեմատեց ճաշերն ու աճուղեղէնները, միաժամանակ ունկնդրելով ամէնէն հաճելի երաժշտութիւնը: MASTER MALL-ի համար նպատակ է ձեր այցելութիւնը հաճուքի վերածել:

ՃԱՇԱՐԱՆԸ ԲԱՅ Ե ԱՌԱՌՕՏԵԱՆ ԺԱՍԸ 8ԷՆ ՍԻՆԶԵԻ ԿԷՍ ԳԻԾԵՐ

Ձեզ գոհացնել մեր գլխաւոր մտադրութիւնն է

Տորայի մայրուղի, Հարպոյեան Թիւրտ Ամբըր, հեռ. (01) 585468/585469

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ցկեանց Պատուակալ Նախագահ եւ Ազգային Բարերար

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

յիշատակիմ, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի յառաջիկայ Կիրակի, 21 Յունիս 1996, Ամբիլիաի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

Պաշտօնական ցաւակցութիւնները կ'ընդունուին տեղւոյն վրայ:

Հ. Բ. Ը.Մ. ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐԶԱՆԱԿԱՅԻՆ

ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հ.Ե.ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՇՈՒՐՋ

ՔՈՒԷԱՐԿԵԼ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ ՓԱՍՏԵԼ

Կ'ԸՍԵ ԸՆԿ. ՏՈՔԹ. ՄԵԼԳՈՆ ԷՊԼԻՂԱԹԵԱՆ

Ընկ. տոքթ. Մելգոն Էպիլոդաթեան ան-
ծանօթ մը չէ մեր ընթերցողներուն: Ան
1972ին ընտրուեցաւ իր քանակական
խորհրդարանի անդամ եւ ծանօթ պայ-
մաններու բերումով, Լիբանանի համար
պատմական տարիներուն, եղաւ Հայկա-
կան Պլոքին պետը. գործօն մասնակցու-
թիւն ունեցաւ ոչ միայն Լիբանանի քա-
ղաքական կեանքին մէջ եւ միացեալ
մնացած պետական հապուադէպ հաստա-
տութիւններէն՝ խորհրդարանին մէջ, այլ
նաեւ՝ Հայ համայնքի քաղաքական ուղե-
գիծի մշակման եւ կիրառման մէջ: Հայ-
կական Պլոքի այլ անդամներու հետ ան
իր մասնակցութիւնը բերաւ Թաէֆի
խորհրդաժողովին եւ ապա, յետ-պատե-
րապետան Լիբանանի քաղաքական
կեանքի վերականգնումի առաջին քայ-
լերուն:



Եթէ ընկ. տոքթ. Մ. Էպիլոդաթեանի Լի-
բանանի քաղաքական կեանքին ուղղա-
կի մասնակցութիւնը երկարեցաւ 1972ին
մինչեւ 1992ի ընտրութիւնները, ան այդ
փուլին առաջ եւ անկէ ետք միշտ ալ մօ-
տին հետեւած է Լիբանանի քաղաքական
կեանքին: Արդ, յառաջիկայ երեսփոխա-
նական ընտրութիւններուն նախօրեա-
կին, «Ապրիլ» իւմբագրութիւնը Հայկա-
կան Պլոքի նախկին պետին հետ հար-
ցազրոյցի մը ճամբով կը բանայ նման

հարցազրոյցներու շարք մը, մեր ընթեր-
ցողներուն՝ հայ քուէարկողներուն ու-
շադրութեան յանձնելով անցեալին ու
այժմու վիճակներուն կարգ մը ծալքերը,
բայց մասնաւոր վեր առնելով Հայ հա-
մայնքի իրաւունքներուն հետապնդման
համար առնուած քայլերը եւ միջոցները,
մասնաւոր որ, ինչպէս կ'ըսէ ընկ. տոքթ.
Մ. Էպիլոդաթեան, Հայ համայնքի քաղա-
քական գործունէութեան սեւեռակէտերն
են Լիբանանի ու հայութեան շահերուն
պաշտպանութիւն եւ անոնց միջեւ ներ-
դաշնակցութիւն, իսկ ատիկա կ'ըլլայ ներ-
կայութիւն փաստելով:

ՀԱՐՑՈՒՄ.- Ընկ. Էպիլոդաթեան. յետ-պատե-
րազմեան Լիբանանի մէջ, ծնունդ առաւ ընտ-
րութիւնները պոլիթքոքի ենթարկելու եւ քուէար-
կութեան չմասնակցելու մտածողութիւն մը, որ
բաւական ազդու էր 1992ի ընտրութիւններուն,
իսկ այսօր նմանազան է բարեփոխութեան: Եթէ
մեր գրոյցը սկսիմք այն կէտէն, որ ինչ կը
ընչապէս քուէարկել, ինչ արժէք ունի անհա-
տի ու ամբողջ հաւաքակառուութեան մը, մեր պա-
րագայինը Հայ համայնքի քուէն...

ՏՈՔԹ. Մ. Էպիլոդաթեան.- Նախ ըսեմ, որ
քուէին ներկայութիւն կը նշանակէ. իրանանցի
հայուն համար քուէարկել կը նշանակէ այն՝ թէ
ինք Լիբանանի մէջ ներկայ է, կը ստանձնէ իր
քաղաքացիական բոլոր պարտականութիւնները,
որոնց շարքին, առաջին դիրքի վրայ կու գայ
քուէարկելու իր իրաւունքը:

Վերջին տարիներուն, գանազան պատճառնե-
րով, քուէարկութիւնները անցան դժուար պայ-
մաններու տակ. ինչպէս ըսիք՝ եղան պոլիթքոքի,
որոնց սակայն մենք չմասնակցեցանք: Եւ մեզմէ
անկախ պատճառներով, հայութեան քուէները
երեւելան այնպիսի ձեւով, որ չէին արդարացներ,
գոնէ ուրիշներու աչքին, մեր սեփական ներկայու-
թիւնը խորհրդարանին մէջ:

Ուրեմն, այժմու պայմաններուն մէջ, մենք
առաջին հերթին պարտականութիւններ ունինք
մենք գմեզ ներկայացնելու խորհրդարանին մէջ,
հարց չէ թէ մէկ կուսակցութեան ճամբով. հայ
քուէարկողներ իր քուէն պիտի տայ իր ուղեւոր
նշանակելու եւ անձնագրէս յարմար կ'ը տեսնեմ,
որ ըլլան ուրիշ թեկնածուներ եւս, որպէսզի հա-
յութեան թիւը գումարուի գանազան թեկնա-
ծուներուն թիւերով, պատկերաբար ըլլայ իրական,
որովհետեւ այսօր կայ այն տպաւորութիւնը, թէ
պատկերը իրականութեան չի համապատասխա-
ներ:

Հ.- Քուէարկողներուն մօտ կայ այն տպաւո-
րութիւնը, (սմանք կը փորձեն ստեղծել այն
տպաւորութիւնը), թէ քուէարկել թէ ոչ, ար-
դիւնը պիտի ըլլայ նոյնը: Կը բաժնէ ք այս
կարծիքը:

ՏՈՔԹ. Մ. Է.- Հաւանաբար անցեալին այս
կարծիքը մօտ էր ճշմարտութեան, բայց այսօր
այդպէս չէ: Եւ անցեալի այդ ճշմարտութիւնը
պէտք է այսօր մեզ գծաւորութեան մասունք այլ

մտայնութեան պատճառով, որովհետեւ այսօր
պայմանները փոխուած են: Փոփոխութեան պատ-
ճառները շատ են: Օրինակ, հայութեան մէկ մա-
սը գաղթած է, ունեցած ենք թիւի նուազում,
բայց մեր այսօրուան թիւը բերեք այն չէ, ինչպէս
որ մարդիկ կ'ուզեն գայն ներկայացնեն: Քուէար-
կութիւնը իրական պատկերը պիտի ներկայացնէ
հայութեան ներկայութիւնը, պայմանաւ որ հա-
յը քուէարկէ: Քուէարկէ որուն որ ուզէ, ինչ
գաղափարի թեկնածուի, սակայն քուէարկէ ան-
պատճառ:

Հ.- Հայ քուէարկողներու թիւը անցեալի
հանգրուաններուն վնասը եղած է կարգ մը
շրջաններու մէջ: Այսօր ը:

ՏՈՔԹ. Մ. Է.- Անցեալին վնասը եղած է,
այո՛ւ. այդ շրջանին, երեսփոխական ժողովուրդ կը
բաղկանար 90 հոգի, 45ր՝ իսլամ, 55ը քրիստոնե-
այ: Մենք քրիստոնեաներուն մէջ կը ներկայա-
ցնէինք մօտաւորապէս 10 առ հարիւրը, ինչ որ
կրնար կշիռը փոխել, երբ քաղաքական պայքար-
ներ կը մղուէին: Հայութեան քուէները վնասը
եղան երկար տարիներ: Ներկայիս, երեսփոխա-
ններուն թիւը 128 է, իսկ իսլամ եւ քրիստոնեայ
ներկայացուցիչներու համեմատութիւնը 50-50%
է: Հետեւաբար, այսօր հայութեան ներկայացու-
ցիչներուն քուէները նուազ վնասը են, քանի
ինչ որ էր անցեալին:

Հ.- Բայց չէ՞ք կարծիք որ մեր այժմու թիւն
ալ ազդու դեր ունի, նկատի ունեցելով, որ միւս
պլոքները ալ մեծաթիւ չեն:

ՏՈՔԹ. Մ. Է.- Այո՛ւ. եւ պէտք է ըսել, որ լիբա-
նանեան միւս պլոքները չեն ներկայանար այն
հասկացողութեամբ, ինչ որ է Հայկական Պլոքին
պարագան: Լիբանանեան խորհրդարանին մէջ,
պլոքները յաճախ կը կազմուին ընտրութիւննե-
րէ ետք: Կը կազմուին խմբակցութիւններ, որոնք
պլոքի դեր կը կատարեն, սակայն եւ չեմ տեսած
որեւէ այլ պլոք, որ ունենայ Հայկական Պլոքին
հասկացողութեամբ դրուելուն, պլոքի հասկա-
ցողութիւնը ըլլայ այնքան ցորաւոր, որքան եղած
է Հայկական Պլոքին կէջը: Միւս պլոքներուն մէջ,
անհատները անպայման չեն հետեւիր պլոքին
առաջնորդին ուղղութեան, այլ իրենց անձնա-
կան գաղափարները ունին, եւ թե՛ պլոքին հետ
համակարծիք չըլլան, կը հեռանան անկէ:

Պլոքի դրուելուն իրաւամբ միայն ու միայն
Հայկական Պլոքին համար գործածուած է: Անոր
անդամները իսկապէս կը ներկայանային իրեն
միացեալ կազմ, ունենալով միասնական գաղա-
փարներ, միասնական ընտրական նախագիծ եւ
ծրագիր:

Հ.- Եւ այս վիճակը նկատաւոր է մեր շահե-
րուն հետապնդման:

ՏՈՔԹ. Մ. Է.- Բնականաբար նպաստած է,
այն իմաստով որ մենք յաճախ կըրցած ենք ճշմու-
րանցներ, մեր կշիռը գործածելով այլ պլոքնե-
րու միջեւ:

Հ.- Ջարգացման ինչ հանգրուաններ ալ-
բայ՝ Հայկական Պլոքի հասկացողութիւնը,
մինչեւ որ հասած է յետ - 70ականներու վիճա-
կին:

ՏՈՔԹ. Մ. Է.- Երբ այսօր Հայկական Պլոք
կ'ըսենք, յաճախ կը մոռնանք պատմութիւնը:
Պէտք է նշենք, որ անցեալին, եւ երկար ատեն,
Հայ համայնքը միայն մէկ երեսփոխան, միայն
մէկ ներկայացուցիչ ունեցած է խորհրդարանին
մէջ, սկսեալ Լէյլէկեանի եւ Մ. Տէր Գալուստեա-
նի օրերէն: Յետոյ, ունեցած ենք 2 ներկայացու-
ցիչ, տարիներ ետք, ունեցած ենք 4 ներկայացու-
ցիչ, յետոյ՝ 5անդամ. ի վերջոյ, աւետարանական-
ներու ներկայացուցիչն ալ ներմուծելով Հայկա-
կան Պլոքի մէջ՝ ունեցած է Յաւդամ: Պլոքի գա-
ղափարը ստեղծուած է եւ գարգացած՝ անկա-
խութենէն տարիներ ետք:

Հ.- Ի՞նչ էր իմքը պլոքի մեր հասկացողու-
թեան:

ՏՈՔԹ. Մ. Է.- Պլոք հասկացողութիւնը կը
հիմնուէր այն կէտին վրայ, որ հայ ներկայացու-
ցիչները միասնական քաղաքականութիւն մը պի-
տի կիրարկեն Լիբանանի մէջ: Պլոքին անդամնե-
րը առհասարակ եղած են ոչ - կուսակցականներ,
բացի մէկ հոգիէ, որ կուսակցութիւնը կը ներկա-
յացնէր խորհրդարանին մէջ եւ խորհրդարանէն
դուրս՝ պետական շրջանակներու մօտ:

Հ.- Իսկ որո՞նք էին միասնականութեան
սկզբնականները:

ՏՈՔԹ. Մ. Է.- Պլոքը կազմուած է հետեւեալ
հասկացողութեան վրայ. անկախ խորհրդարա-
նին մէջ պիտի պաշտպանէ նախ՝ Լիբանանի,
յետոյ՝ նաեւ հայութեան շահերը, այնքան ատեն,
որ այս երկրի վարչակարգը համայնքային է: Եւ
այս երկու հասկացողութիւնները, այսինքն՝ Լի-
բանանի եւ հայութեան շահերու պաշտպանու-
թեան սկզբունքները աւելի քան 30 տարիներու
ընթացքին իրարու ներհակ չեղան, այլ ընդհա-
կաւորաբար: Ըսել կ'ուզեմ՝ Լիբանանի եւ հայու-
թեան շահերուն պաշտպանութիւնը միշտ ալ ըն-
թացած են նոյն գիծերուն վրայ: Անոնք իրարու
լրացուցիչ եղած են, մեզի համար մէկը միւսէն
առաջահերթ չէ եղած եւ մէկը առանց միւսին չի
կրնար գոյութիւն ունենալ:

Հ.- Հայկական Պլոքի գաղափարին ձեւ մատ-
նանշած այս բիւրեղացումին ընթացքին, բայց
մանաւանդ 70ականներու ընտրութիւններու ու
անկէ ետք տագնապի ծանր տարիներուն, Հայ
համայնքը ու ինչքան երկարացնող պլոքը զանա-
զան ճիշդումներու ենթարկուած է: Յաճախ փորձ
կատարուած է, որպէսզի մեր ինքնուրոյն ըն-
թացքէն կամ իրաւունքներէն զրկուէինք: Արդ,
Հայկական Պլոքը ինչպէ՞ս յաջողեցաւ մնալ -

ւանդ տագնապի պայմաններուն մէջ իր ինք-
նուրոյն գիծը պահել:

ՏՈՔԹ. Մ. Է.- Հայկական Պլոքի քաղաքակա-
նութիւնը հիմնուած էր որոշ սկզբունքներու
վրայ, որոնք այսօր եթէ թուենք՝ կրնան թուիլ
«հասարակ», որովհետեւ քանի որ իրար ընդ-
կ'ըսեն. բայց օրին, այդ սկզբունքները հայու-
թեան քաղաքական միտքը ճշդեցին. այդ սկզբ-
ունքները պարզ կարգախօսք էին, այլ քաղա-
քական յստակ ուղեգիծ: Այդ սկզբունքները հե-
տեւեալներն էին.

Ա.- ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Թերեւս այսօր կրնայ գարմանալի թուիլ, թէ
պլոք մը ինչպէ՞ս կրնայ նման սկզբունք մը որ-
դեգրել. հաւանաբար հարց տրուի, թէ կարելի՞ է
այլ քաղաքականութիւն ունենալ:

Այո, կարելի էր ունենալ. կային պլոքներ, հա-
մայնութիւններ, կուսակցութիւններ, որոնց հա-
մար Լիբանանի անկախութիւնը կարեւոր եւ
առաջնահերթ արժէք էր: Անոնք կը մտածէին
թէ Լիբանանը կրնայ միանալ արաբական այլ
երկրի մը, կամ՝ կրնար բաժանուիլ ենթարկուել:

Բ.- ԼԻԲԱՆԱՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Այն իմաստով, որ եթէ որեւէ խմբակցութիւն
կ'ուզէր Լիբանանը բաժնել, Պենք չէինք կրնար
համաձայն ըլլալ նման ծրագրի: Եւ պատմու-
թիւնը ցոյց տուաւ, որ նման գաղափարներ ու-
նեցողներուն թիւը փոքր էր: Արդ, մեր այս սկզբ-
ունքին հիմամբ, մենք պիտի հակադրուէինք
այդպիսի խմբակցութիւններու գործնական եւ քա-
ղաքական ազդեց:

Հ.- Եւ այս սկզբունքի պատճառով, մենք յա-
ճախ ճիշդումներու ենթարկուեցանք, չէ՞:

ՏՈՔԹ. Մ. Է.- Բնականաբար ենթարկուե-
ցանք: Այդ մասին նաեւ կարելի է այլ առիթով
երկար խօսիլ: Մենք տեղի չտուեցանք այդ ճշմու-
նեղութեան տակ եւ անշեղ կերպով շարունակեցինք
մեր քաղաքականութիւնը:

Գ.- ԼԻԲԱՆԱՆԻ ՆՈՂԱՅԻՆ
ԱՍԲՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Այս կէտը յուսաբանելու համար, պէտք է յի-
շենք պատմական այն պահերը, որոնց մէջ հիմն-
ուեցաւ Լիբանանը: Նախ եւ առաջ, Լիբանան
հիմնուեցաւ գաղութարար պետութիւններու
(Յրանսայի եւ Անգլիոյ) միջեւ համաձայնու-
թեամբ: Ճիշդ է, որ լիբանանցիք պաշարեցան

եւ գոհեր տուին, բայց փաստօրէն դադրութեան
արարներու բախումներէն ծնունդ առաւ Լիբա-
նանը:

Այդ օրերուն, գանազան պատճառներով, նկա-
տի չառնուեցաւ միաձուլ Լիբանան մը, այլ Լի-
բանան եղաւ գանազան համայնքներու ամբող-
ջութիւն մը: Այս վիճակը թէ՛ եւ ունէր իր անկիւն-
ի առաւելութիւնները, սակայն նաեւ ունեցաւ
իր անպատեհութիւնները եւ առիթ տուաւ մեզի
ծանօթ խռովութիւններուն: Իսկ Լիբանանը այս
իմաստով եզակի չէ. օրինակները շատ են, Իր-
անտանի մինչեւ Պոսնի, Պենի, Եւրոպայի:

Լիբանանի հողային ամբողջականութեան
սկզբունքին հաստատումը կը մենկէր այն մտա-
հոգութենէն, որ որեւէ մասնատումը դուռ պիտի
բանար այլ մասնատումներու, իսկ այդ ընթաց-
քով, ոչ քրիստոնէական եւ ոչ ալ իսլամական
միաձուլ եւ առանձին պետութիւններ կրնային
գոյատեւել կողք կողքի, առանց խռովութիւննե-
րու ստեղծման:

Հ.- Այս մտահոգութիւնը արդարացնող ամե-
հեւ շօշափելի նախադրեցաւ հաւանաբար 1958
էր...

ՏՈՔԹ. Մ. Է.- 1958ի ղէպերը միայն նախադ-
րաններ էին: Այդ հանգրուանին, լիբանանցիք
հաւանաբար լիովին չզգացին թէ ինչ կը պատա-
հի, որքան խոր խրամատ մը կը նետուի իրենց
միջեւ, որ ի վերջոյ 1975ին յանգեցաւ արիւնալի
տագնապին:

Դ.- ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ շԵՏԱՊԵՐՈՒՄ

Հայկական Պլոքին համար նախապայման էր
աշխատանք տանիլ՝ բարեկաւելու լիբանանցիներ-
ուն ապրուստի վիճակը: Այս իմաստով, ամէն
նազամ, որ նման հարցերը դրուեցան քուէարկու-
թեան, մեր պլոքը իր քուէն տուաւ այնպիսի օրի-
նագիծերու, որոնք այս մարզին մէջ բարիք կը
խոստանային:

Օրինակի համար, բնակարանային քաղաքա-
կանութիւնը, որ ուղղուած էր համեստ եւ աշ-
խատաւոր դասակարգին, ընկերային ապահովու-
թեան ծրագիրներ միշտ ալ իրենց կողքին ունե-
ցած են հայութեան երկարացուցիչներուն քուէն:
Արդար է, որ այս մասին արձանագրութիւն պահ-
էի հրապարակաւ:

Հ.- Այս վերջին կէտը ուրկէ՞ առած է իր
ներշնչումը:

ՏՈՔԹ. Մ. Է.- Պէտք է յիշեցնել, որ 1972ի
ընտրութիւններուն, Հայ Յեղափոխական Դաշ-
նակցութիւնը ներկայացաւ յատուկ նախագիծով
(փաթեթով), ուր ամբողջական կերպով բանա-
ձեւուած էին այդ քաղաքականութեան հիմունք-
ները:

Աւելի ուշ, 1975ին, երբ տեղի ունեցաւ երկրի
քաղաքական անձնաւորութիւնները համախմբող
պատմական ծանօթ ժողովը, մենք ներկայացանք
քաղաքական յայտարարութեամբ, որ լրացու-
ցին էր 1972ի փաթեթով: Այդ սկզբունքները
կազմեցին մեր վարած քաղաքականութեան հիմ-
քը:

Երբեք եւ ճշդեցին մեր ուղեգիծը:

Հ.- Թերեւս այս առիթով կարելի չէ երկար ու
մանրամասնօրէն անդրադառնալ Հայկական
Պլոքի իրագործումներուն մասին, սակայն նկա-
տի ունենալով, որ արդար ակնկալութիւններու
յաճախ ընկերացած են անարդար գնահատում-
ներ եւ քննադատութիւններ, կ'արժէ, հաւանա-
բար, հակիրճ կերպով խօսիլ տարուած աշխա-
տանքներուն մասին:

ՏՈՔԹ. Մ. Է.- Կարճ խօսքով՝ պէտք է ըսել, որ
քննադատութիւնները յաճախ արձանագրուած
են որոշ կուսակցական շրջանակներու կողմէ,
եւ ատիկա բնական է, քաղաքական խաղի ար-
տայալութիւնն է: Բայց պատմութիւնը կրնայ
վճռել, թէ վերջին 25 տարիներու ժամանակամի-
ջոցին, միայն Ս անդամ Հաշուող պլոքը ինչպիսի
իրագործումներ կատարեց լիբանանեան եւ հայ-
կական շահերու հետապնդման իմաստով, նախ
90, ապա 128 անդամ Հաշուող խորհրդարանին մէջ:
Չարցին պէտք է մօտենալ այն հարցումով, որ
ինչ միջոցներ ունէինք, ի՞նչ իրագործեցինք:

Հ.- Եթէ կատարեմք յետադարձ ակնարկ մը՝
ակնկալութեան շրջանէն սկսեալ...

ՏՈՔԹ. Մ. Է.- Անկախութեան օրերուն, ու-
նէինք քանի մը Ա. կարգի պաշտօնեայ, որոնք
նշանակուած էին հողատարութեան շրջանին:
Նշանակումներ կատարուած էին անհատներու
կարողութեան եւ անոնց ունեցած կապերուն,
եւ ոչ թէ համայնքային ներկայացուցչութեան
հիմամբ: Անոնք ժամանակի ընթացքին հանգրստ-
եան կոչուեցան: Հայկական Պլոքը աշխատեցաւ
այլ հայեր պաշտօնի կոչել պետական համակար-
գին մէջ: Այդ եղաւ առանց նկատելու նշանակու-
անհատներու կուսակցական պատկանելիու-
թիւնը: Անցեալի եւ մօտիկ անցեալի օրինակները
բազմաթիւ են: Այլ համայնքներ բնականաբար
ընդդիմացան այս ընթացքին, որովհետեւ այլ
խմբակներէ պիտի առնուէին այդ պաշտօնները:

Այսօր, Հայ համայնքը աւելի լայն ներկայա-
ցուցչութիւն ունի պետական մակարդակի վրայ,
քան ինչ որ էր անցեալին: Պէտք է մոռնալ, որ
հայ համայնքի գաւառները անցեալ տասնամակ-
ներուն հակամէտ չէին պաշտօնի կոչուելու պե-
տական վարչամեքենային մէջ: Անկախութեան
նախօրեակին եւ անկէ ետք, ֆրանսերէնի գոր-
ծածութիւնը լուծած էր լեզուի հարցը, յետոյ
միայն վերջին տասնամակին է որ հայեր աւելի
լաւ կը տիրապետեն արարերէն լեզուին եւ նա-
խընթաց տասնամակներու այդ խոչընդոտ աշ-
սօր չկայ այլեւս:

Հ.- Ընկ. Էպիլոդաթե



գրականութիւն եւ մշակոյթ

ՆՈՐ ԵՐԳԵՐ ԱՐՑԱԽԷՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

Արցախէն Եւ Հայրենիքէն խմբագրութեան հասած վերջին թղթածրարը կը բովակուողակէ Եսեւ գրականութեան վերաբերեալ Գիւթեր, ուր յատկանշական են արցախցի երիտասարդ բանաստեղծ Ռոպէր Եսայեանի արձակ բանաստեղծութիւնը՝ «Տեսակցութիւն» խորագիրով եւ 24ամեայ գիւմրեցի ուսանող Միխայիլ Գաբրիէլեանի բանաստեղծութիւնները:

Քովի սիւնակներով ընթերցողից մատուցուած «Տեսակցութիւն»ը նոր տարածք ու խորութիւն կու տայ Արցախեան Պայքարի ճամբուն վրայ իրենց կեանքը նուիրած Գահատակներուն արեան, որուն խորհրդանշիչը այն ծաղիկն է, որ կը կոչուի «Տեսակցութիւն»։ Այլաբանական իմաստով հետաքրքրական այս հմարքը ապագայայայտութեան մէկ ճանշան է, որ կը բխի բանաստեղծից հաւատամքէն, հայրենի հողից ու հայ կեանքից Գլխամամբ իր փայփայած տեսլիքէն, սերէն, գուրգուրանքէն։

Ապագայէն անցեալ - Երկայ այս «շրջապտույտ»ը կը

հոգեվարէ բանաստեղծին հոգին, խիղճը, միտքը, որոնք կը ծուլուին Շուշի պարիսպներէն բարձրացող ոգեկան լուսաբացին մէջ ու կը վերածուին պատմութեան մէկ փատաւոր էջը Գահատակութեան լոյսով ողողող քնարական շուքի, բանաստեղծութեան իրեն տիեզերական շնչառութիւն։

Երեւանի Պետական Համալսարանի ուսանող, 1972 թ. ծնունդ Միխայիլ Գաբրիէլեանի բանաստեղծութիւնները կը մատենե գրական խառնուածքի մը ներկայութիւնը, որ կ'ապրի ներքին ալեկոծում, տագնապ ու ընդվզում՝ կեանքի, մահուան, ընկերային երեւոյթներու ու լուսկայէն իր իսկ սեփական եսին դէմ։ «Բանաստեղծութեան Ծնունդը», «Գիտեմ», «Օտարածուն», «Որպէս», «Գիշերուայ Գրկում», «Այսպէս», «Ու Կը Գան», «XX (20րդ) Դարի Վերջը» քերթուածները հիւսւած են Միխայիլ Գաբրիէլեանի հոգեկան տարբեր տրամադրութիւններուն ազդեցութեան տակ, ուր սակայն ակներեւ է արժեքներու, իրաւարժեքներու, մարդկային վերսկզբունքներու, խոսելիքներու փնտռումը, որ հեղինակը կը ցարկէ ափէ ափ հեքիաթ, սէր, խաղաղութիւն, մեծութիւն, բանաստեղծութիւն ու մարդկայնութիւն գտնելու յոյսով...

Ս. Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԾՆՈՒՆԴԸ

Ես արարում եմ աշխարհն իմ բաժին Ու երկրագունդն եմ արարում հիմա, Լուսն ծանրանում եմ իմ բեքուող խաչին, Անշտապ քայլելով գնում եմ դէպ մահ Սիրտն եմ արարում ինձ բաժին ընկած, Հոգին եմ փնտռում երկնի քառուսում։ Այդ որոնման մէջ դառնում եմ Աստուած, Անցած դարերի հեւքն եմ լսում։ Ես... Ես երկնում եմ ինձնից ծնունդին, Շունչ տալիս նրա մարմնին տկար։ Լուսն ուղեկցում եմ ես հեռացողին Ցանկանում բախտ ու բարի ապագայ։ Մահ էլ եմ երկնում իմ բուննու լեզուով, Անեծք եմ՝ քրում անբան մարդկանց, Նրանց այցելում վիճակի տեսքով Ու ցաւ պատճառում ահաւոր անանց։ ... Ես արարում եմ աշխարհն իմ բաժին, Ինձ եմ արարում որպէս յաւերժ վագր։ ... Լուսն ծանրանում եմ իմ բեքուող խաչին Ու արարման մէջ դառնում եմ Աստուած...

ՈՒ ԿԸ ԳԱՆ

Ու կը գան մարդիկ, որ չեն հասկացուի։ Ու կը գան մարդիկ գնալու համար։ Նրանց գնալուց հոյը կը լացի Նրանք կ'ընտրեն մի ուրիշ ճանապարհ։ Ու կը գան մարդիկ ու չեն հասկացուի Ու չի ընդունուի բարձրութիւնը այդ։ Ներկայութիւնը ոչինչ չի փոխի, Նրանք կ'ապրեն միշտ լուսն... անցկատ։ Նրանք կը սիրեն առանց գոռալու Առանց ողբալու ու... անպատասխան, Քանգի գիտեն, որ միշտ մնալու են Մենակ ու մենակ։ Լոկ իրենց նման։ Ու կը գան մարդիկ ու լուսն կը գնան։ Լուսն կը սիրեն ու չեն դժգոհի Լոկ երազներում նրանք կ'երեւան Լոկ երազներում սիրահարներին։ Սիրահարները, նուիրեալները կը զգան, կը շնչեն... Ու կ'ապրեն օդով, կը սիրեն օդով, Նրանցից փախած... լուսն նրանց լքած։ ... Սիրահարները... Տիրուր կը ժպտան նրանց ժպիտով։

XX ԴԱՐԻ ՎԵՐՋԸ

Մառախլապատ բազում ափեր փռելով ծածկուած, Մուծով ծածկուած բիւր քաղաքներ ծովի ափին, Բիւր հրաշքներ փռեքաթախ, վաղուց լքուած, Բիւր երազներ ենք մականեր տկար ու հին։ Մառախլապատ բիւր տանարներ բախտին ձօնուած Ու յաւերժի վազքին տրուած բազում կեանքեր, Բիւր հանճարներ ժամանակի ծեղքով խեղդուած, Աշխարհ խեղդող, աշխարհ ճգմող բիւր հրեշներ։ Բիւր վիճակներ ժամանակի ոտքի տակին, Բիւր դիմակներ՝ դեմքին հրաշք-ժամանակի Բազում մայրեր՝ կարօտ սիրոյ ու գգուանքի... ... Մառախլապատ բազում ափեր փռելով ծածկուած, Մուծով ծածկուած բիւր քաղաքներ ծովի ափին Բիւր հրաշքներ փռեքաթախ, վաղուց լքուած, Բիւր երազներ ենք մականեր տկար ու հին...

ԳԻՏԵՄ

Գիտեմ հեքիաթներ չեն ծնում՝ հիմա, Չեն ծնում՝ դրանց հաւատացողներ, Առանց պատրանքի են գնում դէպի մահ Ու մահուան ճամբին չկան լացողներ։ Գիտեմ, երազներ նոյնպէս չեն ծնում։ Չեն ծնում մերժուած սիրոյ անուրջներ, Գիտեմ ինչով է աշխարհը սնուում, Ինչպէս են փլուում բազում կամուրջներ։ Գիտեմ, փոխուել են ժամանակները։ Մարդիկ են փոխուել ժամանակի մէջ։ Արդէն անտէր են հալարտ շները ... Ու տառապանքը արդէն չունի վերջ...

ԱՅՍՊԷՍ

Այսպէս քարն է ընկնում ժայռի գլխից Ու արծիւն է ճախրում հոգեվարքի ժամին։ Այսպէս մարդն է փախնում իր սեփական բախտից։ Այսպէս սերն է ծնում՝ որպէս երազ անանց Ու մարմինն է յոգնում ճանապարհից երկար, Հալարտ ձին է ընկնում, միշտ մնալով անսանձ Լքուած գայլն է փտում, որպէս կեանքի նկար։ Այսպէս մարդն է ապրում՝ որպէս հոգի բախտի, Որպէս ստրուկ հլու ու որպէս տէր, արքայ Այսպէս մարդն է ապրում առանց ցաւ ու վախի երբ կորցնելու արդէն ոչինչ, ոչինչ չկայ։

Այսպէս։ Այսպէս ես եմ ապրում որպէս մի մարդ-աշխարհ, ես եմ մեռնում ու յանձնում հողին, Այսպէս եմ յառնում ակամայ մի վկայ Ու մի վտիտ թռչուն՝ բազմած ծառի նիւղին։ Այսպէս։ Այսպէս շատ են եկել ու գնացել աւաղ, Այսպէս կեանքն է շնչել բազում-բազում դարեր, Աշխարհն այսպէս չի ունեցել վերջ ու սկիզբ, Տիեզերքն է աշուպ տիեզերք արարել։ Այսպէս... քարն է ընկնում ժայռի գլխից, Կեանքն է գնում դէպի վախճան անդարձ։ Այսպէս մարդն է փախնում իր սեփական բախտից, Որպէս երազ անթեւ, որպէս նժոյգ անսանձ...

ԾԱՂՐԱԾՈՒՆ

Նա լաւ էր խաղում։ Շատ լաւ էր խաղում Ու ծիծաղում էր ամբողջ դահլիճը, Թախծոտ աչքերով հրաշք ծաղրածուն Կրկեսի հոգին էր ու... խիղճը։ Նա լաւ էր խաղում։ Սակայն թախիծը Ձեր լքում երբեք աչերը նրա։ Կրկեսը չէր եղել երբեք նրա իղձը, Երազներում նրա կրկեսը չկար։ Սակայն ի՞նչ արած։ Այսպէս ստացուեց։ Կրկեսը դարձաւ հարազատ օճախ, Մանկութիւնը շուտ հրաժեշտ տուեց, Պատանեկութիւնն էլ... շատ արագ անցաւ։ Ու երազները ներկայ չդարձան Ցանկութիւնները՝ չիրականացան, Ու նա ստիպուած կամայ – ակամայ Թախծոտ աչքերով ծաղրածուն դարձաւ Ու փորձեց կարգաւ ուրիշի հոգին, Այնուհետ որոնել երազը կորած Նա՝ այդ ծաղրածուն համայն աշխարհին Միայն ուրախ հեքիաթներ կարդաց։ ... Նա լաւ էր խաղում։ Շատ լաւ էր խաղում Ու ծիծաղում էր ամբողջ դահլիճը։ Թախծոտ աչքերով հրաշք ծաղրածուն Կրկեսի հոգին էր ու... խիղճը...

ՈՐՊԷՍ

Որպէս երազ կ'ապրեմ, Որպէս սիրոյ անուրջ, Որպէս մի բախտ դժիւմ, Ու խորտակուած կամուրջ։ Որպէս տանար կ'ապրեմ Որպէս սիւն ու խոյակ, Որպէս գմբէթ ու վեմ, Որպէս ծովի կոհակ... ... Որպէս մի ցաւ անանց, Որպէս սնունդ հոգու, Որպէս ծերուկ սմբած, Որպէս թունոտ լորտու։ Ու թէ մենեմ յանկարծ, Տրուած ժամի կամ վաղ, Թող իմ բաժին Աստուած Դառնայ սատանայ կաղ։ Թող յոյսը իմ բաժին Տանեն կեանքից թախծոտ Ու խենթ լոյսը իմ հին Մնայ որպէս կարօտ։ ... Որպէս երազ կ'ապրեմ, Որպէս սիրոյ անուրջ։ Ու թէ մի օր մեռնեմ, Որպէս... կանգուն կամուրջ։

ԳԻՇԵՐՈՒԱՅ ԳՐԿՈՒՄ

Գիշերուայ գրկում երազներ կան սուրբ Ու մոռացում կայ գրկում գիշերուայ։ Սատանան անգամ դառնում է շատ նուրբ Ու յանցանքներ չենք գործում ակամայ։ ... Գիշերուայ գրկում... Ես ու դու չկանք, Մեր Մենքը չկայ խոր լուսութեան մէջ։ Գիշերուայ գրկում կայ լոկ եսի կեանք Ձկատարուած իղձ՝ անսկիզբ ու անվերջ։ Խորտակուած սէր կայ գիշերուայ գրկում, Փշրուած յոյսեր, կամուրջներ լքուած, Հեռացած սէր կայ ու կայ մոռացում, Բազում նամակներ երբեք չգրուած։ Վերջակտեր կան շնչում գիշերուայ Բիւր հարցականներ՝ խաւարի գրկում։ ... Իմ եսի կողքին քո եսը չկայ Ու խաբխափում եմ ես ծանր մթնում։ Մենք եմ որոնում խաւարում անձայր, Հեքիաթ եմ փնտռում իմ Մենքին յեռուած, Սէր եմ որոնում հոգօր, կատաղեալ։ ... Խոստովանաքներ՝ երբեւէ չասուած։ Գիշերուայ գրկում երազներ կան սուրբ ու մոռացում կայ գրկում գիշերուայ։ Խոստովանաքներ՝ խենթ, խելառ ու նուրբ, Սիրոյ որոնում՝ անսկիզբ, անվկայ...

ՄԽԻԹԱՐ ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Վառօղի բոյրն է շրջում հողի շնչառութեան միջով, յետոյ, ծակելով գիշերամած տագնապների շերտեր, դուրս գալիս հողի անդորրութեան միջից ու տեսնում... աշխարհը...

Ինքը չգիտի իր անունը, իսկ մարդիկ իրեն ծաղիկ են ասում։ Եւ ծաղիկն այդ մարդկանց երազարոյր ձայնի մէջ ինքն իրեն գտնում է։ Մերթ յիշում է... Շուշիի պարիսպներով ելնող ազատարարների կարմիր հնոցը, մերթ խաւար լուսութեան խուճապն է յիշում գսպանակուած փողոցներից... Եւ այն պահն է յիշում, երբ վերջին կրակոցից յետոյ... Ինքը մտերիմի պէս փարուեց ընկնող զինուորին ու մնաց... Նրա մարդը ու ափսոսանքից ծուռտուող Հայեացքի մէջ։ Յետոյ միասին թաղուեցին հողում։

Եւ մի օր, դուրս գալով հողի անդորրութեան միջից, զարմանում է, որ մարդիկ իրեն ծաղիկ են ասում։ Իսկ աւելի ճիշդ կը լինէր եթէ իրեն կոչէին «Տեսակցութիւն», որովհետեւ ինքը մի հեռաւոր տեսակցութեան համար է աշխարհ եկել...

Իմ մարմնից բուսած ծաղիկ, լսո՛ւմ ես իմ ձայնը։ Ես տիեզերական տարածքներ եմ կտրել, որպէս-գի գրուեմ քեզ հետ։ Շուշիի պարիսպների տակ ամէն հայ գիտնորի շնչառութեան մէջ հայոց պատմութիւնն էր վերածնունդ։ Հնչեց այդ պատմութեան լոյսն էր ինձ կանչում երկար ժամանակ, որ իմ ինքնուր ճաղողակցուի յիշողութեան տիեզերական շնչառութեան հետ։ Ես այդ կանչը լսում եւ խուսափում էի տեսակցութիւնից։ Մինչեւ որ, իմ մարմնից բուսած ծաղիկ, տարածութիւնները միացնող քո հարազատ բուսմունքն զգայի՝ ուրախանալով, որ իմ մարմնից ոչ թէ չարիք, այլ հնչեց... ծաղիկ է բուսել, որն արդարացնում է մեր... տեսակցութիւնը։

Չահել էր իմ մարմինը, երբ ես նրան հրաժեշտ տուի։ Հողը դժուարութեամբ տեղաւորեց մարմինս որ ծոցի մէջ։ Երկար ժամանակ խռով էր ինձնից ու թաքուն հնչակներում էր ծառերի արմատներին մէջ։ Ես լսում էի այդ հարազատ հնչակտոյց՝ մի պահ յիշելով, հայոց պատմութեան բարոյն օրորող ծերացած հօրս եւ ինձ երջանիկ էի համարում յատկապէս այն պատճառով, որ յիշողութեան դաշտը փարձամանում էր նաեւ իր անկրկնելի՝ գոյութեան աւելումով։

Ես տեսնում եմ ազատագրուած քաղաքիս առաւտր, նրա շողերի մէջ վազվազող մանուկներին, իրենց ընդհատուած կեանք խաղաղութեան մէջ վերսկսող ընկերներին, առօրեայի կյանող ճեղքերի մէջ երազանքի փշրանքներ հաւաքող սեւագգեստ մայրերին... Եւ յանկարծ թմրում եմ, որ ես ինքս էլ ինչ որ մէկի համար դառնում եմ երազանքի պատուելի ու եր-

ջանկութեան որոնում, դառնում յիշողութեան ելք ու պատմութեան լոյս...

Ձեռքսեղմումների ջերմութիւնն եմ զգում հեռուից... Ահա վերեւից իջնող՝ մշուշն է համբուրում այն փոքրիկ տան տանիքը, որտեղ ծնուել ու մեծացել եմ... Մշուշի բացուածքների միջից տեսնո՛ւմ եմ մեր քակր։ Մայրս ծաղիկներն է ջրում՝ օդի մէջ գգուելով իմ ներկայութեան շշուկները։ Երեխանքս վազվազում են բակում՝ զգուշանալով, որ յանկարծ չտրուին ինձնից մնացած աւանդներն ու յուշերը։ Կովր վիզն է քսում ցանկապատին։ Ճնճողները երազանքի ծուկներին պէս ցատկոտում են ցանկապատի խոնաւ ստուերի մէջ ու հացի փշրանքներ թռչնում կովի տաք շնչառութիւնից մաքրուող գետնից... Ես օդի պէս լցւում եմ մեր բակը, լցւում եմ մեր տունը, պատերի բարձրութիւնն եմ չափում, որմնախաչերի մէջ լսում անմոռանալի հեքիաթներին ձայնը... Ինձ չնչում են հարազատներս... Նրանց հայեացքների դատարկ տեղերն եմ լցնում ինձնով, իմ գոյութեան եթերային շնչով... Յետոյ... յանկարծակի կանգ եմ առնում (ասես խոր մի անդորրութիւն է իրորում տիեզերքում), միանգամից նայում եմ բոլոր հարազատներին ու մտերիմներին հայեացքի մէջ, ուր լուծիւնն է դանդաղ խորանում՝ վերածուելով սպիտակ արցունքների...

Իմ մարմնից բուսած ծաղիկ...

Քո բոլոր տարածիր ազատագրուած քաղաքի փողոցներում, ծանօթ - անձանթներին շուրթերի գծերի մէջ դարձիր համբուրների սարսուռ, ձգտի՛ր ճանապարհների փոշոտ հանգոյցները՝ նրանց վրայ մաղելով Անսահման ճողուս։ Եւ երբ լուսութեան կապանքների միջից բողբոջների պէս պայթեան նրանք, իմ սպիտակ հրեռանքի ձայնը կը լսես դու...

Իմ մարմնից բուսած ծաղիկ...


Շուշիի պարիսպներին վրայ Ոգու լուսաբացն է տարածում իր թեւերը... Դու է՛լ գուրգուրուի՛ր նրա ցոլքերի մէջ որ... լուսանա՛յ տեսնա՛ հողի կոպերի տակ... Դու է՛լ պայծառացիր այս տօնական երթի կոհակներում, որ իմ շունչը, իրեն գեղեցկութեան հնչողութեան, ընդամենը գնաց... յաւերժից ալիքուող վայրկեաններին...

Տե՛ս... չիրիմներից միաստուածային լոյս է բարձրանում... Նրա ազդեցութեան տակ ես մոռանում եմ շատ ու շատ բաներ... Որոշ բաներ էլ ինձ համար կորցնում են իրենց իմաստը՝ միանալով կապոյտ անէութեանը։ Մեռնել, գոհուել, նահատակուել բառերի փոշացող կաղապարներով է ծածկուած երկիրը... Կաղապարների փոշին ճեղքելով՝ բարձրացնում է լոյսը...


Իմ մարմնից բուսած ծաղիկ...

Ինքը չգիտի իր անունը... Եւ ծաղիկն այդ մարդկանց ձայնի մէջ ինքն իրեն գտնում է։ Յիշում է այն պահը, երբ քաղաքը կյանում էր ազատութեան բոլոր անկիւններից։ Յետոյ... մի օր զարմանում է, որ մարդիկ իրեն ծաղիկ են ասում։ Աւելի, ճիշդ կը լինէր, եթէ իրեն կոչէին «Տեսակցութիւն», որովհետեւ ինքը հնչեց այս լուսաւոր տեսակցութեան համար է աշխարհ եկել...

ՌՈՊԵՐՏ ԵՍԱՅԵԱՆ



ԱԶԳԱՅԻՆ ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ



«ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ»

Այգային Աքսոր Գասարճեան վարժարանի տնօրէնութիւնը ուրախութեամբ կը տեղեկացնէ, թէ ամառնային դպրոցական արձակուրդի տեւողութեան, դպրոցի մանկապատանեկան գրադարանը երկուշաբթիէն չինգըաբթի օրերը, առաւօտեան ժամը 9էն 12, բաց է բոլոր պատանիներուն համար:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԼԵԱՆ . ԹԱԹԻԿԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Տէրոջ շնորհքով՝ 1996-97 կրթական տարեշրջանի նախնական արձանագրութիւնները, հին թէ նորեկ աշակերտներու, սկսած են եւ պիտի տեսն մինչեւ Չորեքշաբթի, 31 Յուլիս 1996:

Նորեկ աշակերտներէն կը խնդրուի իրենց հետքերէլ շուսանկար, վերջին տարւան վիճակացոյցը, անձնաթուղթի պատճէնը եւ աշակերտական հաստատագիր՝ նախորդ դպրոցէն:

Յարգելի ծնողներու ուշադրութեան կը լսնանենք, թէ նախակրթարանի Ա. կարգէն մինչեւ միջնակարգի Դ. կարգի (պրըվէ) աշակերտներու արձանագրութիւնները, տեղի անբաւարարութեան պատճառով, պէտք է կատարուած ըլլան մինչեւ Չորեքշաբթի, 31 Յուլիս 1996, այլապէս տնօրէնութիւնը այժմէն իսկ կը մերժէ, վերոյիշեալ ժամանակամիջոցը անցնելէ ետք, ստանձնել որեւէ պատահանատուութիւն արձանագրութեան տեսակէտէ:

Օգոստոս ամսուան ընթացքին դպրոցի գրասենակը բաց պիտի ըլլայ ամէն Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 9էն մինչեւ կէսօրուան ժամը 12: Իսկ Երեքշաբթի, 3 Սեպտեմբերէն սկսեալ, գրասենակը բաց պիտի ըլլայ ամէն օր:

1996-97 կրթական տարեշրջանի դասաւանդութիւնները միջնակարգ Բ., Գ., Դ. եւ երկրորդական Ա., Բ., Գ. (գիտական) դասարաններուն համար պիտի սկսին չինգըաբթի, 5 Սեպտեմբերին:

Կը վստահինք ձեր գործակցութեան ոգիին:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

1 Յուլիս 1996

ՎԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹՆԵՐ

●Ծերանոցի ցորակառոյց շէնքի խանութները տրամադրելի են վարձու՝ մաքուր գործի եւ վաճառականութեան: Հետաքրքրուողները կրնան դիմել խնամակալութեան յանձնախումբին՝ տնօրէնութեան միջոցաւ: Հեռ. 260533-34:

1996 ՏԱՐՈՒԱՆ ԱՄՐԱՆ ԱՆԱԿՆԿԱԼԸ

ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԵՐԳԻ ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ՓԱՌԱՏՕՆ

Կազմակերպութեամբ՝ ՎԱՆԱՅ ՉԱՅՆԻ

Ժողովրդային եւ հայրենասիրական երգերով ելույթ կ'ունենան

ԳՕԳՕ ՀԱՅԻԹԵԱՆ
ԿԱՐՕ ԿԱՊՈՒՏԱԿԵԱՆ
ՎԻԳԷՆ ՏԻՇԶԷՔԷՆԵԱՆ
ՄԱՆՈՒԿ ՄԻՆԱՍԵԱՆ
ՀՐԱՋ ԿԱՅԾԱԿԵԱՆ
ՌՈՊԷԼ՝ ՔԻՒՐՏԵԱՆ

Մասնակցութեամբ՝ ՍԵՂՕ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ եւ իր նուագախումբին

●ԽԱՆԴԱՎԱՌ ՄԹՆՈԼՈՐՏ ԵՒ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ

Տեղի կ'ունենայ երեքշաբթի, 6 Օգոստոս 1996, երեկոյեան ժամը 8էն սկսեալ, Պուրն Համուտի Քաղաքապետարանի հրապարակին վրայ:

Հրաւիրուած է ամբողջ լիբանանահայութիւնը, խանդավառ ժամեր անցընելու Պուրն Համուտեան այս անախընթաց փառատօնին:

ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

(ՀԱԶՄԻԷ)

1996-97 կրթական տարեշրջանի նախնական արձանագրութիւնները, հին թէ նորեկ աշակերտներուն համար, սկսած են եւ կը շարունակուին մինչեւ Յուլիս 10:

Ամրան ընթացքին արձանագրութիւնները կը շարունակուին ամէն Երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը, առաւօտեան ժամը 9-12, Յուլիս 10էն մինչեւ Օգոստոսի վերջը:

Սեպտեմբեր 2էն սկսեալ արձանագրութիւնները կը կատարուին ամէն օր, բացի Ծաբաթ օրերէն: Վերաքննութիւնները տեղի պիտի ունենան 17 եւ 18 Սեպտեմբերին:

1996-97 կրթական տարեշրջանը պիտի սկսի հետեւեալ ձեով.

Հինգշաբթի, 26 Սեպտեմբեր 1996, Ցրդ եւ 9րդ: Երեքշաբթի, 1 Հոկտեմբեր 1996, նախակրթարան եւ միջնակարգ:

Երեքշաբթի, 8 Հոկտեմբեր 1996, մանկապարտէզ:

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել տնօրէնութեան, հեռ. 451115 եւ 451124:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՄԱՀԱԶԴ

Տիկին Սեղա Մակարեան եւ զաւակները՝ Քրիսթին եւ Գարին

Տէր եւ տիկին Պետրոս Պետրոսեան
Տիկին Լիւսի Պալիկեան
Տէր եւ տիկին Վարդան Պալիկեան
եւ համայն ազգականները կը գլուխը իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, փեսային եւ հարազատին:

ՀԵՐԻ ՄԱԿԱՐԵԱՆԻ

անակնկալ մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 11 Յուլիս 1996, Լուս Անճելոսի մէջ (Մ.Ն.):

Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 16 Յուլիսին:

●Ներկայիս ընդունել իրեն մահազոյ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԱՅԼՃԱՐ ԱՅԼՃԱՐ
ՍԱՐԳԻՍ ԵՒ ԱՐԾԱԼՈՅՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆՆԵՐՈՒ Մահուանց Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Յուլիս 1996, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ԱՐԲԱՆԱՍ ՈՍԿԵՐԻՉԵԱՆԻ մահուան Բ. տարելիցին եւ ՍԻՐԱՆ ՈՍԿԵՐԻՉԵԱՆԻ մահուան Թ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Յուլիս 1996, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ՀԱԼԷՊ ՀԱԼԷՊ
ՆԱԶԵԼԻ ԱՐԷԼԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Յուլիս 1996, Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ՀԱՄԱՍԿՈՒ ՀԱՄԱՍԿՈՒ
ՍԱԼԻ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Յուլիս 1996, Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ՄԱԶՐՈՒՀԻ ՀԱԼԱՃԵԱՆԻ մահուան Զ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Յուլիս 1996, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

Կ՝ՈՒԶՈՒԻՆ

●TERRIBLE Հաստատութիւնը կարծեմ ունի փորձառու վաճառող օրիորդներու՝ վճարումի լաւ պայմաններով (ամսական, փոխադրութիւն, շահաբաժին): Ներկայացաւ անձամբ, Ժըտէլ տէի մայր պողոտայի վրայ:

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱՐԱՔԻՆ

●Ամանոսի շրջանի մէջ: Հեռ. 267092 եւ 03-614169:

Կ՝ՈՒԶՈՒԻՆ

●LES AMIS Հաստատութիւնը կարծեմ ունի փորձառու վաճառող օրիորդներու՝ վճարումի լաւ պայմաններով: Ներկայացաւ անձամբ, Ջալալի մայր պողոտայի վրայ:

ԾԱԽՈՒ ԵՐԿՈՒ ՅԱՐԿԱՐԱՔԻՆՆԵՐ

●Անթիլիաս. ԼՐԳՈՐԷ:

1996 թաւ. սեթը. Ցրդ եւ 9րդ յարկերու վրայ: Գեղատեսիլ վայր. 3 ցնջասենեակ, հիւրասրահ, խոհանոց, 2 բաղնիք, ջրհոր եւ կառատուն: Գին իւրաքանչիւրը 75.000 \$: Հեռ. 263984:

Կ՝ՈՒԶՈՒԻ

●Շէնքի պահակ մը՝ ՇԻՐԱԿ հաստատութեան համար, առաւօտեան ժամը 8էն մինչեւ երեկոյեան ժամը 6: Գին՝ հեռ. 262867 եւ 581094:

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱՐԱՔԻՆ

●Աշքուրի մէջ. 85 քառ. մետր: Գին՝ 27.000 \$: Հեռ. 496599:

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«Ազգակ»ի հետ հեռաձայնային կապ պահելու համար, կը խնդրուի հեռաձայնել հետեւեալ թիւերուն. 280115, 280780 եւ 583028:

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ՍՈՒՏԵԻ ՆԻԹԱԿԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՄԵՐՈՒՆԵՐԸ ԶԵՐ-ԹԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՆԵԹԵՐ

ԱՏՀԻԼի մօր

●ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ակերով
●ԱՌԱԽԵԼԱԳՈՅՆ խնամք
●Վճարման դիւրութիւններ

Հասցէ. - Ազգային Խորհրդի շէնք, ԱճԵՏԻ կից, Հեռ. 263324

Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏԳԵՐԸ

ԽՈՑ (21 Մարտին 20 Ապրիլ)

Ոչ ոքի գաղափար փոխանցեցէ կամ ոչ մէկուն ականջին փափագէ՛ք ձեր տեղեկութիւնը, որովհետեւ բերնէ բերան պիտի տարածուի, մանաւանդ՝ ձեր գործատեղիին մէջ: Զգոյշ եղէ՛ք չարաշինութիւնը:

ՅՈՒԼ (21 Ապրիլին 21 Մայիս)

Շնորհիւ ձեր ուշադրութեան եւ քաղաքականութեան, պիտի կարենա՛ք խուսափել նամբու ընթացքին պատահելի միջադէպէ մը: Խոհեմութիւնը միշտ շահ կը բերէ:

ԵՐԿՈՒՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս)

Ուշադիր եղէ՛ք պատելու միջոցին եւ սխալ որոշումներ մի՛ տա՛ք: Զեր պատգամները չափք հարկ է հիմնուի արդարութեան վրայ: Ուրեմն՝ զգոյշ:

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս)

Հետո կը մնա՛ մարդիկ եւ ձեր ու անոնց միջեւ քայ միջոցներ կը ձգէ՛ք, մինչդեռ շատ հետաքրքրական հանդիպումներ կան. փորձեցէ՛ք մօտիկութիւն ցոյց տալ ոմանց ու պիտի համոզուի՛ք:

ԱՌԻԻՒ (24 Յուլիսին 23 Օգոստոս)

Հին օրերէն մնացած պարտաւորութիւն մը կամ պարտ մը երեսան պիտի գայ ու ձեզ մտնէ՛ շփոթի: Հարցը բերելի տէ՛ք, որովհետեւ ծանրակշիւ ոչինչ կայ:

ԿՈՅՍ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)

Ընկերովի աշխատող «կոյսերը» այսօր պիտի անջատուին իրարմէ: Անկախ գործ մը կատարելու մասին որոշում տուէ՛ք:

ԿԵՒԻՌ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)

Հարց մը դատելու կամ վիճակ մը կշռելու միջոցին սխալ դատումներ մի՛ ընէ՛ք: Եթէ արձակուրդի երբեք, լաւ պատրաստուեցէ՛ք ամէն տեսակետով:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)

Կասկածամբ զիրար հարցնել կրնա՛ն ինք պիտի լսող-նալի մը՝ անիմաստ ու անհիմն լինելով: Մեղմութեամբ վարուեցէ՛ք ձեր սիրելիին հետ եւ համաձայնեցէ՛ք հարցերը կարգաւորելու:

ԱՂԵՂՆԱԻՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)

Մանր հարց մը մի՛ մեծցնէ՛ք, խոշորացոյցով մի՛ պիտէ՛ք ձեր շուրջի անցուղարձերը: Նոյնպէ՛ս՝ ձեր գլխին վրա որոշումներ մի՛ տա՛ք, կրնա՛ք վնասել:

ԱՅՄԵՂՂԻՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար)

Բարկութիւն, մղուած անարգական խօսակցով նամակ մի՛ գրէ՛ք ոեւէ մէկուն. կրնա՛ք զոյգալ: Համբերեցէ՛ք էիջ մը ու պիտի տեսնէ՛ք, թէ խնդրը առարկայ անձը մերժողութիւն պիտի խնդրէ՛ք ձեզմէ:

ԾՈՎԱՆՈՅԸ (21 Յունուարին 19 Փետրուար)

Հետո մնացէ՛ք ըստաւարտ եւ շուայտըն ծախսել: Լաւ է, որ գոհման առօրեայ մանր-մունր ծախսերով: Խնայողութիւնը խոհեմութիւն է:

ՋՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ)

Խնդրի մը շուրջ արդար դատողութիւն ցուցաբերեցէ՛ք: Եթէ զգա՛ք, որ խառնած է՛ք ու սխալած, մի՛ անմտիկ մերժողութիւն խնդրելու կամ լուսարանութիւն տալու:

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 3431

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՆԱԶԱՐԵԱՆ

1 2 3 4 5 6 7 8 9 10

1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

1. Բանակային - Իրլանտացի թատերագիր՝ Ճորճ Պեռնարտ:
2. Ամերիկահայ առաջին լրագիրը - Առիւծի մագ:
3. Ունայն, սին - Ինտոնեզիոյ գեղատեսիլ կղզիներէն:
4. Յետոյ - Մետրոպոլիտանի հոն թաղուեցաւ:
5. Սաստիկ սիրահարուկը:
6. Վիթիարի, հսկայական - Ամբարտաւան:
7. Օտար աղջիկը - 12-ամիս:
8. Աղամանը - Գուր:
9. Գոյականին տեսակը բնորոշող (հակ.):
10. Իրար ժխտող:

ՈՒՂԱՆԱՅԵԱՑ

1. Տարբերակ:
2. Ապրուստ, կենսապահիկ:
3. Բարձրակարգ վերաբերեալ - Ցուցական ածական:
4. Պոչ - Ընտանի կենդանիներ բուծանելու հողային կարուած:
5. Պէտք ունենան - Մայրաքաղաք:
6. Աղբիւր - Մարդաբանական - Եկամուտ:
7. Կայծ - Դիմացի:
8. Գաւթ - Ախտ, հիւանդութիւն:
9. Կոնակը առնէր - Երկրորդական աստուած:
10. Ներսէս Համբարձումյանի հայրը - Արական անուն:

ԹիԻ 3430

ԽԱԶԲԱՌԻՆ

ԼՈՒՇՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Ն	Ե	Ա	Ս	Ա	Ղ	Ա	Գ	Ի
2	Մ	Ի	Ն	Ա	Ս	Ղ	Ա	Ս	Ղ
3	Ո	Ր	Ա	Կ	Ո	Ր	Ա	Ս	Ղ
4	Ե	Ս	Ա	Ս	Ղ	Ա	Ս	Ղ	Ա
5	Ե	Ս	Ղ	Ա	Ս	Ղ	Ա	Ս	Ղ
6	Ի	Ղ	Ա	Ս	Ղ	Ա	Ս	Ղ	Ա
7	Ն	Ա	Ս	Ղ	Ա	Ս	Ղ	Ա	Ս
8	Վ	Ա	Ս	Ղ	Ա	Ս	Ղ	Ա	Ս
9	Հ	Ա	Ս	Ղ	Ա	Ս	Ղ	Ա	Ս
10	Ա	Ս	Ղ	Ա	Ս	Ղ	Ա	Ս	Ղ

ՌՈՏԻՈՆՈԿ ՌՈՒՄԻՈՅ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՄՈՍԿՈՒԱ, 17 (ՌէՕԹԸՐ)․– Ռուսիոյ նախագահ Պոռիս Ելցին զօրավար իկոր Ռոտիոնովը պաշտպանուեթեան նախարար նշանակեց, յայտնեց կրեմլինի մամլոյ գրասենեակը։

Ապահովութեան նոր խորհրդական Ալեքսանտր Լեպէտամուր կերպով պաշտպանած էր Ռոտիոնովի թեկնածուութիւնը, զայն անկեղծ եւ արհեստավարժ սպայ մը որակելով։ Ռոտիոնով կը փոխարինէ Փաւէլ Կրաչեւը, զոր Ելցին պաշտօնագրկած էր 18 Յունիսին, զարկ տալու համար իր ժողովրդականութեան՝ նախարնտրական իր արշաւին ընթացքին։

ՀԻՒՍԷՅՆ ԹԱԳԱՒՈՐ – ԾԷՅԽ ԶԷՅՏ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԺԸՆԵՒԻ ՄԷԶ

ԺԸՆԵՒ, 17 (ՌէՕԹԸՐ)․– Յորդանանի Հիւսէյն թագաւորը Ջորեքշարթի օր ժրնեւի մէջ տեսակցութիւն ունեցաւ Արաբական Միացեալ Էմիրութիւններու նախագահ շէյխ Ջէյտ Պըն Սուլթան Ալ Նահիանի հետ, յայտնեց Էմիրութիւններէն պաշտօնատար մը։ Ան դիտել տուաւ, որ տեսակցութեան տեւողութիւնը յստակ էէ, ոչ ալ օրակարգի վրայ դրուած հարցերը։

Հիւսէյն թագաւորը, որ կը փորձէ մտերիմ կապեր ունենալ արար ղեկավարներու հետ եւ միեւնոյն ատեն բարելաւել իր կապերը Իսրայէլի կառավարութեան հետ, Ջորեքշարթի օր Ամմանէն ճամբայ ելած էր Լոնտոն երթալու համար։

ՍԱՏՏԱՄ ՀԻՒՍԷՅՆ Կ'ԱՄԲԱՏԱՆԷ ԲՈԼՈՐ ԱՐԱԲ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

ՊԱՂՏԱՏ, 17 (ՌէՕԹԸՐ)․– Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյն Ջորեքշարթի օր դատապարտեց արաբ ղեկավարները, զանոնք «օտարներու ստորին ծառաներ» նկատելով, որովհետեւ իր երկիրը դուրս ձգեցին Գահրէի գերաստիճանէն։

Նախագահը 90 վայրկեան տեւող ճառ մը արտասանեց, յիշատակելու համար Յուլիս 17ի յեղափոխութիւնը, որ իշխանութեան հասցուց «Ուսսս» կուսակցութիւնը, 38 տարի առաջ։ Սատտամ դատապարտեց նաեւ Միացեալ Նահանգները, դիտել տալով, որ անոնք ալ կը փորձեն իրենց քստմնելի քաղաքականութեան իրբեւ ծածկ օգտագործել ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը։

Խօսելով Գահրէի անցեալ ամսուան գերաստիճանին մասին, ան ըսաւ, որ արար ղեկավարները ժողով գումարեցին, դէմ դնելու համար ո'չ միայն իրաքցի ժողովուրդին, այլ բոլոր արաբ ազատականներուն։ Ան ակնցուց, թէ Գահրէի մէջ անոնք վերածուեցան օտարներու ստորին սպասաւորներու։

ՄԵՌԱԾ ԶԱՄԱԿԸ ԿԸ ՇԱՀԱԳՈՐԾԷՐ

ՆԻԿՈՍԻԱ, 17 (ՌէՕԹԸՐ)․– Կիւրլական ատեան մը բանտարկութեան վիժա արձակեց մէկու մը դեմ, որ գաղտնի պահած էր իր երեք տարեկան զաւակին մահը, որպէսզի՝ պետութեանէն ստացած հատուցումները չդադրին։

Նիկոպոլ մէկ ատեանը երեքշաբթի օր արձակած էր վիժը՝ երեք ամիս բանտարկութեան դատաւարտելով 30 տարեկան Աննելուս Փաւլուն, որ մէկ տարիէ ի վեր պետութեանէն հատուցում կը ստանար իր հաշմանդամ զաւկին հիւանդութեան համար։

ԴԱՏԱԻՈՐԸ ՓԱՍՏԻ ՊԷՏՔ ԶՈՒՆԵՅԱԻ...

ԹԻՐԱՆԱ, 17 (ՌէՕԹԸՐ)․– Ամուսնալուծումի դիմած ամուսին մը դատարանին մէջ եւ դատաւորին ներկայութեան ծանր «ծեծ մը կերաւ» իր կնոջմէն, ուշքը կորսնցնելով գետին ինկաւ եւ անմիջապէս հիւանդանոց փոխադրուեցաւ։

Վերոյիշեալ ամուսինը առջին ալպանացին է, որ ամուսնալուծում կը պահանջէ, որովհետեւ կինը կանոնաւոր կերպով զինք կը ծեծէ։ Դատաւորը առկնց յետաձգումի վեռեց վերջ տալ անոնց երկու տարուան ամուսնութեան։ «Բախտաւոր» ամուսինը ամուսնալուծման վիժը իմացաւ հիւանդանոցին մէջ։

Pour les passionnés de soirées



est de retour à Ain saadé
 Restaurant - pub - Live music
 Ouvert midi & Soir

Ain Saade-Rue principale, 10m, La Forteresse
 Tel: 04/970603-03/702116



اللقمة اللبنانية
 مازات و مشاوي
 ترويقة قروية مع صحن يومي
 تستقبلكم ٢٤/٢٤ - خدمة للمنازل

Caprices des Dieux s.a.l

ՀԱՅԱՂՈՒԼ ԸՆՈՂ ԹՈՒՐԲ ԲԱՆՏԱՐԿԵԱՆՆԵՐ ՄԱՐՈՒԱՆ ՍԵՄԻՆ

ԱՆԳԱՐԱ, 17 (ՌէՕԹԸՐ)․– Ջախակողմեան տասնեակ մը բանտարկեալներ մահուան սեմին կը գտնուին, Թուրքիոյ բանտերուն անտանելի պայմաններուն դէմ երկու ամիսէ ի վեր հացադուլէ ետք, յայտնեցին մարդկային իրաւունքներու պաշտպան գործիչներ Ջորեքշարթի օր։

Հիւսնիւ Օնտուլ ըսաւ, որ, քանի մը օրէն մահեր կ'ընան արձանագրուիլ, թիջ պէտք եղած միջոցա-

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ Կ՝ՈՒԶԷ ԱՇԽԱՐՀԸ ՊԱՂԵՑՆԵԼ

ԺԸՆԵՒ, 17 (ՌէՕԹԸՐ)․– Միացեալ Նահանգներ, անտեսելով ճարտարարուեստի մարզի պատասխանատուներուն եւ քարիւղ արտադրող երկիրներուն առարկութիւնները, Ջորեքշարթի օր առաջարկեցին խիստ միջոցառումներու դիմել մթնոլորտի ջերմացումին դէմ, այնպէս մը որ աշխարհի տարածքին մինչեւ 18 ամիս նուազի ջերմացում պատճառող կազերու արտահանումը։

Այս առաջարկը ըրաւ արտաքին գործոց փոխ նախարար Թիմըթի Ուրրթ, Ժրնեւի մէջ, Կլիմայեցին Փոփոխութեան համագումարին ընթացքին։

Առաջին անգամ ըլլալով էր, որ Ուաշինկթըն միջազգային համաձայնագիր մը կը պահանջէ կենսոլորտի ապականումին դէմ պայքարելու համար։

Ուրրթ թղթակիցներու ըսաւ, թէ իր երկիրը, որ «ջերմանոցի կազեր» ար-

տադրող աշխարհի մեծագոյնն է, վճռած է ղեկավար ղերակաւարութիւն ունենալ միջազգային համայնքը հեռացնելու՝ ջերմացումին պատճառած հաւանական ընդհանուր աղէտներու սպառնալիքէն։

ՔԼԻՆԹԸՆ – ՏՈՒ ՄՐՅԱԿՑՈՒԹԵՒՆ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ, 16 (ՌէՕԹԸՐ)․– Միացեալ Նահանգներու մէջ երեքշարթի օր լոյս տեսած հարցախոյզի մը արդիւնքները ցոյց տուին, թէ նախագահ Պիլ Քլինթըն 22 առ հարիւրի առաւելութիւն մը ունի հանրապետական Պոպ Տոյի վրայ։

Հարցապնդողներուն 50 առ հարիւրը Քլինթընի ի նպաստ արտայայտուած է, իսկ 28 առ հարիւրը միայն ի նպաստ Տոյի արտայայտուած է։ Իսկ թեքսասցի միլիառաւորը Ռոս Փէրօ 16 առ հարիւր ձեռք ձգած է։

ռումները չորրեգրուին։ Ան մատնանչեց երեք բանտարկեալներու (երկուքը Անգարայի մէջ, իսկ երրորդը՝ Պուրսայի մէջ) պարագաներ, որոնց մարմինները կը մերժեն ջուր ընդուելի, ինչ որ մահուան ազդանշան է։ Օնտուլ աւելցուց, որ Թուրքիոյ տարածքին գտնուող 33 բանտերու մէջ հացադուլի դիմած են աւելի քան 300 բանտարկեալներ։ Մայիսին, 1500 քիւրտ ընդդիմադիրներ եւ ձախակողմեաններ սկսած էին հացադուլին։ Քիւրտերը սակայն հրաժարեցան հացադուլէն, երբ արդարութեան նախարար Շեքէթ Քազան այս ամսուան սկիզբը խոստացաւ բարելաւել բանտերուն վիճակը։

ՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷԶ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԸ ԿԸ ԲՈՂՈՔԵՆ ՅԱՅԻ ՍԱԿԻՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ԴԵՄ

ԱՄՍԱՆ, 17 (ՌէՕԹԸՐ)․– Յորդանանի ընդդիմադիր ճակատը Ջորեքշարթի օր յայտարարեց, որ հրապարակային բողոքի ցույցեր պիտի կազմակերպէ հացի սակը եռապատկելու կառավարութեան ծրագիրին դէմ։

Իսլամական Գործունէութեան ճակատի ղեկավար Խահաք Ֆարհան ըսաւ, որ ճակատը չ'ուզեր կացութիւնը պայթեցնել, սակայն կը զգուշացնէ կառավարութիւնը, որ հացին սակին մօտենալը արդէն պայթում մը կը սպառնայ։

Ընդդիմադիր ճակատը որոշած է խաղաղարար ցույցեր կատարել առաջարկուած ծրագիրին դէմ, որուն պատճառը պիտտճակաւն բացն է․ տնտեսական բարեկարգումներ կիրարկելու համար կառավարութիւնը հարկաւոր կը զգայ կարգ մը արտադրութիւններու սակերու բարձրացումը։

ՏԱՃԻԿԻՍՏԱՆ ՓԱԿԵՅ ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԸ

ՏՈՒՇԱՒՊԷ, 17 (ՌէՕԹԸՐ)․– Տաճիկիստան Աֆղանիստանի հետ իր սահմանը փակեց, այն մտաւախութեամբ, թէ կեդրոնական ասիական այս երկրին գինեալ ընդդիմադրութիւնը ուժ պիտի կեդրոնացնէ սահմանին վրայ, յայտնեց կառավարութեան մէկ բանրերը, Ջորեքշարթի օր։

Տաճիկիստանի 4 տարուան քաղաքացիական պատերազմին ընթացքին, կառավարական ուժերուն դէմ պայքար մղող իսլամական գինեալներ հիւսիսային Աֆղանիստանի մէջ կեդրոններէ գործած են։

ՆԻՔՈՒԹԻՆԸ ՆՈՅՆՔԱՆ ՎՆԱՍԱԿԱՐ, ՈՐՔԱՆ ՀԵՐՈՅԻՆԸ

Իտալացի պիտնականներ երէկ յայտնեցին, թէ Նիքոթինը, քոքայինի եւ հերոյինի նման թմրեցուցիչներու պէս կ'ազդէ ուղեղին վրայ եւ կրնայ մարդը նոյնքան կախեալ դարձնել։

Հետազօտողները, ՆԷՅՍՔ գիտական թերթին մէջ կը գրեն, թէ անոնց աշխատանքը որոշ չափով կը հակասէ ծխախոտի գործածութիւնը պաշտպանող խմբակներուն այն հաւաստիքը, թէ ծխախոտի գործածութեան իրրեւ հետեւանք՝ մարդ վարժութիւն ձեռք կը ձգէ, սակայն անկէ կախեալ չ'ըլլար։

ԾԽԱՍՈՏԻ ԳՈՐԾԱՇՈՒԹԵԱՆ ԴԵՄ ԱՐՇԱՒՆԵՐ

Պրագլիւիա Երեքշարթի օր հաստատած է նոր օրէնք մը, ըստ որուն մարդիկ այսուհետեւ չեն կրնար հրապարակաւ ծխել, բացի ճշդուած վայրերու մէջ։

Նոր օրէնքը նաեւ ոգելից ըմպելիներու եւ ծխախոտի պատկերասփռուած ծանուցումները կը սահմանափակէ։

Պրագլիւիա ծխախոտ արտածող աշխարհի մեծագոյն երկիրն է, Յրդ մեծագոյն արտադրողը եւ Յրդ գլանիկ արտադրող երկիրը։

Միւս կողմէ, Վիեթնամ երէկ ըսաւ, թէ պաշտպանութեան նախարարութիւնը արձակած է նոր հրահանգ մը, որուն նպատակը գինեալ ուժերուն մօտ ծխախոտի գործածութիւնը նուազեցնել է։

Անիկա ըսաւ, թէ մեծ թիւով գինուորականներու կողմէ ծխախոտի գործածութիւնը ուղղակի կ'ազդէ չըրջապատին եւ առողջութեան վրայ։

Նոր հրահանքը պիտի քաջայերէ գինուորները, որպէսզի հրաժարեն ծխելէ, միւս կողմէ՝ գրասենեակներու, աշխատավայրերու, ճաշարաններու մէջ բոլորովին արգիւելով ծխելը։

(ՌԷՕԹԸՐ)

ՅՐԱՆՍԱ ՊԻՏԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԷ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԻՐ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

ՓԱՐԻԶ, 17 (ՌէՕԹԸՐ)․– Յրանսական մամուլին համաձայն, պաշտպանութեան նախարար Շարլ Միոն բանակի գինուորներու թիւի նուազումի մանրամասնութիւններ պիտի յայտարարէ, ներառեալ օդուժի նախարխներու փակումը, օդանաւակիրի մը հանգստեան կոչուիլը եւ շուրջ 38 գումարտակներու (մեծամասնութեամբ՝ Գերմանիա) լուծարքի ենթարկումը։

Ան նախ գեկուցում տուած է խորհրդականներու, որոնք մտահոգութիւն արտայայտած են, թէ բազմաթիւ գօրանոցներու փակումը տնտեսական տագնապ պիտի ստեղծէ փոքր քաղաքներու համար, որոնք կախեալ են գինուորականներու ծախսած գումարներէն։ Կառավարութիւնը մշակած է տնտեսական օժանդակութեան ծրագիր մը, անգործ մնացողներուն հատուցում տալու համար։

Պոնի կառավարական ադրիւրներ հաստատեցին «Լը Մոնսու» օրաթերթին հրատարակած այն տեղեկութիւնները, թէ Յրանսա, յառաջիկայ 3 տարիներուն, Գերմանիոյ մէջ իր ուժերը 20 հազարէն 3 հազարի պիտի իջեցնէ։

Կրճատումները հետեւանք են պարտադիր գինուորագրութիւնը ջնջելու եւ պաշտպանութեան պիւտճէն նուազեցնելու նախագահ Ժաք Շիրաքի որոշումին։

ՍՈՖԻԱՅԻ ՄԷԶ ՌՄԲԱՀԱՐՈՒՄ

Պուլկարիոյ մայրաքաղաք Սոֆիայի կեդրոնական ցօտիին մէջ, ական մը պայթեցաւ երէկ առաւօտ, համագումարներու ազգային կեդրոնին մէջ, նիւթական վնասներ պատճառելով։ Մարդկային զոհ չէ արձանագրուած։

Ոստիկանութեան մէկ բանրերը յայտնեց, թէ ականը գետեղուած էր կեդրոնին ստորերկրեալ բաժինին մէջ, այնպիսի ձեւով, որ անոր պայթումը առաւելագոյն չափով վնաս հասցնէ։

Ներքին գործոց նախարարութիւնը դէպքը «ահաբեկչական մեծ արարք» որակեց։

Միւս կողմէ, Մոսկուայի ամէնէն մեծ օդակայաններէն մէկը երէկ առժամարար փակուեցաւ, անձանթի մը հետձայնային սպառնալիքէն ետք, թէ ական մը յարուած է չէշքերէն մէկուն մէջ։

Ապահովութեան ուժերը պայթուցիկ որեւէ կազմած չեն գտած «Լնուրովօ» օդակայանին մէջ։

(ՌԷՕԹԸՐ)

ԱՀԱՐԵԿԶՈՒԹԵԱՆ ԴԵՄ

ՓԱՐԻԶ, 17 (ՌէՕԹԸՐ)․– Ճարտարարուեստի Եօթներու արտաքին եւ ներքին գործոց նախարարները եւ Ռուսիա, Փարիզի մէջ, Յուլիս 30ին միօրեայ համաժողովուր մը պիտի կայացնեն ահաբեկչութեան դէմ պայքարի հարցը քննարկելու համար, յայտնեց Յրանսայի արտաքին գործոց նախարարութիւնը, Ջորեքշարթի օր։

Համագումարին շուրջ համաձայնութիւն գոյացած էր Եօթներու Լիոնի Յունիսի ժողովին, երբ անոնք ահաբեկչութեան դէմ պայքարը «գերագոյն առաջնահերթութիւն» հռչակած էին։

ԻՐԱՆԻ ՄԷՁ

ԹՄՐԵՅՈՒՑԻԶԻ ԵՕԹԸ ՄԱՔՍԱՆԵՆԳ ՄԱՀԱՊԱՏԻՃ ԿԸ ԿՐԵՆ

ԹԵՀՐԱՆ, 17 (ՌէՕԹԸՐ)․– Իրանի մէջ մահապատիժ ենթարկուած են Եօթ ամրաստանեալներ, որոնք ժաւճիւռ ստացած էին թմրեցուցիչի մաքսանենդութեան աւագակախումներու անդամ ըլլալու համար, հաղորդեց Թեհրանի ռատիոկայանը, Ջորեքշարթի օր։

Ռատիոկայանը աւելցուց, որ ամրաստանեալները անդամներ էին թմրեցուցիչի մաքսանենդութեան միջազգային ցանցերու, որոնք վերջերս քողագերծուեցան ոստիկանութեան կողմէ։ Ոստիկանութիւնը կրցած էր աւելի քան հինգ թոն աֆիոն, հերոյին եւ մորֆին գրաւել։

ԳԻՏԱԿԱՆ

ԵՐԿՐԻ ԿՈՐԻԶԻՆ ԹԱԻԱԼՈՒՄԻՆ ՄԱՍԻՆ

ՆԻՒ ԵՈՐՔ, 17 (ՌէՕԹԸՐ)․– Բոլիւմպիա համալսարանին հետազօտութեան կեդրոններէն մէկը Ջորեքշաբթի օր լայտնեց, թէ գիտնականներ առաջին անգամ ըլլալով չափած են մեր մոլորակին հեքքին հաստանու երկաթեայ կորիզին բաւալման արագութիւնը եւ գտած, թէ անկիւ աւելի արագ կը թաւալի, քան մոլորակը։ Գիտնականներ ալդ լայտնաբերումը կարեւոր են անակնկալ կը նկատեն։ Անոնք կ'ըսեն, թէ անկիւ պիտի զարգացնէ մոլորակին մասին մարդոց գիտութիւնը եւ դեպի նոր հետազօտութիւն պիտի առաջնորդէ գիտնականները, բացատրելու համար երկրին ձգողական դաշտին փոփոխութիւնները։

Անկիւ նաեւ առիթ պիտի տայ հասկնալու մոլորակին կեդրոնի ջերմաստիճանները եւ ջերմութեան «հոսքը» մոլորակին ընդմէջէն, ի վերջոյ շարժման մէջ դնելով մակերեսային խաւին զանազան բաժինները։

Երկրին կեդրոնական կորիզը մօտաւորապէս լուսինին մեծութիւնը ունի։ Անկիւ կը թաւալի, որովհետեւ շրջապատուած է արտաքին հեղուկ կորիզով մը։

Լոնտոնի սակարանին մէջ, դրամանիշներու փոխանակման սակը հետեւեալն էր երէկ կէսօրին.	
● Մէկ արիբիք	1.5432/42\$
Ամերիկան տոլարի փոխանակման սակըրը.	
Մարք	1.4842/52
Ջուիցիիական ֆրանք	1.2150/60
Պելիքական ֆրանք	30.57/61
Իրանական ֆրանք	5.0271/21
Իտալական իր	1522.1/3.6
ԵԼԵ	108.69/79
Շուէտական քուրոն	6.6260/60
● Մէկ օնս ոսկին	383.30/383.80\$